# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

35ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 42 (1742) ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 14, 2015
VOLUME 35, NO. 42 (1742) SATURDAY, NOVEMBER 14, 2015

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## Անհրաժեշտ է Արդար Հանրաքուէ

Դեկտեմբեր 6-ին Հայաստանի մէջ կը սպասուի Սահմանադրական բարեփոխութիւններու ժողովրդային հանրաքուէ: Այս հանրաքուէի շուրջ ընթացող քննարկումները առայժմ սահմանափակուած են քաղաքական շրջանակներուն մօտ, իսկ լայն հասարակութիւնը մեծ հետաքրքրութիւն չդրսեւորեր այս հարցի նկատմամբ:

Առաջարկուող սահմանադրական փոփոխութիւններով Հայաստան անցում պիտի կատարէ կառավարման նախագահական համակարգէն դէպի խորհրդարանական-վարչապետական համակարգ, ուր Ազգային Ժողովէն ներս մեծամասնութիւն ապահովող կուսակցութիւնը իրաւունք պիտի ունենայ առաջադրելու երկրի վարչապետը եւ ձեւաւորելու կառավարութիւն:

Սահմանադրական փոփոխութիւններուն ի նպաստ կողմնորոշուած են բնականաբար երկրի իշխանութիւնները գլխաւորութեան նախագահ Սերժ Սարգսեանի: Սակայն, փոփոխութիւններուն նկատմամբ դրական կեցուածք որդեգրած են նաեւ բազմաթիւ ընդդիմադիր նկատուող կուսակցութիւններ եւ քաղաքական գործիչներ, որոնք անցեալին առաջին հաւատացողները եւ պահանջողները եղած են խորհրդարանական համակարգին: Անոնց շարքին է նաեւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը:

Նկատի առնելով Սահմանադրական փոփոխութիւններուն «Այո»-ի կողմնակիցներուն եւ «Ոչ»-ի ճակատի միջեւ ուժերու դասաւորումը, կը կարծուի որ Սահմանադրութիւնը կը վաւերացուի առանց մեծ դժուարութեան:

Վերջին օրերուն ի յայտ եկած տեղեկութիւնները, որ Ոստիկանութեան հրապարակած ընտրողներու ընդհանուր թիւը 270 հազարով աւելի է քան Հայաստանի մէջ չափահաս եւ ընտրելու իրաւունք ունեցող քաղաքացիներու պաշտօնական թիւերէն, կրնան կասկածի տակ դնել ընտրութիւններու արդիւնքները: Յառաջացած մտահոգութիւնները փարատելու համար իշխանութիւնները տակաւին ունին բաւարար ժամանակ, յստակութիւն մտցնելու ուղղութեամբ:

Նկատի ունենալով վերջին տասնամեակներուն տեղի ունեցած բոլոր մակարդակի ընտրութիւններու շուրջ տիրող անվստահութիւնը, խիստ անհրաժեշտ է եւ մաղթելի, որ այս հանրաքուէն ընթանայ բնականոն եւ թափանցիկ պայմաններու մէջ, նոր սահմանադրութեամբ նոր էջ բանալով Հայաստանի քաղաքական կեանքէն ներս:

«ՄԱՍԻՍ»

## Ռուսաստան եւ Հայաստան Խիստ Քննադատեցին Ղարաբաղի Վերաբերեալ ԵԽԽՎ-ի Զեկոյցը

*Նոյեմբեր 9-ին, Երեւան կատարած իր այցելութեան ընթացքին Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերկէյ Լավրով քննադատեց Եւրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի (ԵԽԽՎ) քաղաքական հարցերով յանձնաժողովի վերջերս ընդունած զեկոյցը Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ՝ յայտարարելով, թէ Մինսկի խումբի համանախագահող երկրները դէմ են, որ ղարաբաղեան հարցը տեղափոխուի այլ հարթակներ:*

*«Մենք՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ն ու Ֆրանսան, հաստատապէս դէմ ենք, որ Լեռնային Ղարաբաղի հարցի կարգաւորման գործով հետեւողական, գործնական եւ համբերատար երկխօսութեան փոխարէն, փորձեն այս թեման տեղափոխել տարբեր միջազգային հարթակներ, որոնք չեն զբաղուիր կարգաւորմամբ: Ամենայնդէպս, միջազգային հանրութեան անունով անոնց ոչ ոք նման յանձնարարութիւն չէ տուած: Համանախագահները կ'աշխատին կողմերուն հետ, պայմանաւորուածութեան հիման վրայ, որ հաւանութեան արժանացած է ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդին կողմէ: Լեռնային Ղարաբաղի հարցով այս եռեակն է որ կը հանդիսանայ լիազօրուած միջնորդը եւ որեւէ կտրուկ գործողութիւն՝ անկախ այն բանէն, թէ ով է հեղինակը, միայն կը վնասէ գործին եւ համանախագահներուն», - Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեանի հետ ունեցած բանակցութիւններու աւարտին կայացած համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարեց Սերգէյ Լավրով:*



*Սերկէյ Լավրով եւ Էդուարդ Նալբանդեան Երեւանի մէջ տեղի ունեցած հանդիպման ժամանակ*

*ԵԽԽՎ քաղաքական հարցերով յանձնաժողովի անցեալ շաբթուայ ընթացքին ընդունած՝ «Բռնութիւններու աճը Լեռնային Ղարաբաղի եւ Ատրպէյճանի այլ գրաւեալ տարածքներուն մէջ» վերտառութեամբ վիճայարոյց զեկոյցը, որու հեղինակն է բրիտանացի պատգամաւոր Ռոպերդ Ուոլթըր, կոչ կ'ընէ Հայաստանին «դուրս բերել հայկական զինուած ուժերը Լեռնային Ղարաբաղէն եւ Ատրպէյճանի միւս գրաւեալ տարածքներէն, հաստատել այդ տարածքներուն վրայ Ատրպէյճանի լիակա-*

*Շար.ը էջ 4*

## Միացեալ Նահանգներու Դեսպանին Համաձայն Հայաստանի Մէջ Կոռուպցիան Նաեւ Ազգային Անվտանգութեան Հարց է

*Նոյեմբեր 10-ին, Երեւանի մէջ կայացած Հայ-ամերիկեան առեւտրաարդիւնաբերական պալատի նախաձեռնած մէկ միջոցառման ընթացքին, Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան Ռիչըրտ Միլզ յայտարարեց որ, դեսպանատան գլխաւոր նպատակներն են խթանել հայ-ամերիկեան առեւտրատնտեսական յարաբերութիւնները, աջակցիլ կոռուպցիայի դէմ պայքարին եւ խրախուսել քաղաքացիական հասարակութեան կայացումը:*

*«Իմ առաջին նպատակը գործարար ու առեւտրային յարաբերութիւններու խորացումն է մեր երկու երկիրներուն միջեւ: Թոյլ տուէք յստակեցնեմ. ես չեմ խօսիր օժանդակութեան նոր ծրագիրներու մասին, այլ նկատի ունիմ առեւտուրը՝ համատեղ առեւտրային կապերու ամրապնդումը, որ երկուստեք օգտակար կը դառնայ մեր տնտեսութիւններուն համար», ըսաւ դեսպանը:*

*Դեսպանի Միլզ տեղեկացուց որ, երկկողմ առեւտրատնտեսական կապերը խորացնելու նպատակով, Հայաստանի եւ ԱՄՆ-ի կառավարութիւնները այս Մայիսին ձեւաւորած են Առեւտրի ու Ներդրումներու հայ-ամերիկեան Խորհուրդը, որու առաջին նիստը պիտի կայանայ Նոյեմբեր 17-ին Երեւանի մէջ:*

*Յաջորդ նպատակը կոռուպցիայի դէմ պայքարն է, որ ըստ*



*Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան Ռիչըրտ Միլզ*

*ամերիկացի դիւանագէտին այդ պայքարի խթանը կու գայ Ամերիկայի կառավարութեան ամենաբարձր մակարդակներէն:*

*«Երբ գործարար ոլորտէն ներս մրցակցութիւնը արդար չէ եւ հիմնուած տրամաբանական առեւտրային չափանիշներու վրայ, երբ կան հզօր շահեր, որոնք անհամաչափ տնտեսական եւ քաղաքական հետեւանքներու կը հանգեցնեն, ապա այդ կը սահմանափակէ տնտեսական աճը: Այդ պարագային կը տուժէ ամբողջ տնտեսութիւնը եւ կը տուժէ ամբողջ երկիրը: Օտարերկրեայ պիզնէսը կը քուէարկէ*

*Շար.ը էջ 5*

## Սիտնիի Մէջ Տեղադրուած է Հայոց Ցեղասպանութեան Խաչքար

*Նոյեմբեր 8-ին Աւստրալիոյ Ուիլլոուպի (Սիտնի) քաղաքին մէջ, Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմի առաջնորդ գերաշնորհ Տէր Հայկազուն եպիսկոպոս Նաճարեանի բարձր հովանիի ներքոյ տեղի ունեցած է Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած Յիշատակի խաչքարի բացման եւ օրհնութեան արարողութիւն:*

*Այս մասին կը տեղեկացնէ Սիտնիի Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ ֆէյսպուքեան էջը:*

*Ձեռնարկը իրականացուած է Սիտնիի Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ կազմակերպութեամբ եւ Ուիլլոուպի քաղաքային խորհուրդի համագործակցութեամբ:*

*2015 Թուականի Մայիսին Աւստրալիոյ Ուիլլոուպի քաղաքի քաղաքային խորհուրդը Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւ ընդունած էր:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# 4.1% Տնտեսական Աճի Փոխարէն 650-700 Հազար «Այո»

### Յովիկ Աբրահամեանի Նոր Մարտահրաւէրը

ԱՐԱՄ ԱՄԱՏՈՒՆԻ

Ֆինանսների փոխնախարար Պաւէլ Սաֆարեանը հաստատում է, որ ընթացիկ տարում հարկային եկամուտները կը լինեն պլանաճէով նախատեսուածից ցածր, քանի որ չի իրականանում նախատեսուած աճի ցուցանիշը՝ 4.1 տոկոսը: Այդ ցուցանիշն իրականացնելու հաստատակամութեան մասին պնդումներ անում է միայն վարչապետ Յովիկ Աբրահամեանը, թէեւ հնարաւոր է, որ նա հրաժարուի իր այդ պնդումներից՝ սահմանադրական հանրաքուէն անցկացնելու եւ ցանկալի արդիւնքն ապահովելու պարագայում:

Յովիկ Աբրահամեանը մինչ այժմ պնդում էր, որ ապահովելու է 4.1 տոկոս աճ, ինչպէս խոստացել է նախորդ տարի վարչապետ դառնալիս եւ կառավարութեան ծրագիր ու պլանճէ ներկայացնելիս: Բոլորի, անգամ կառավարութեան անդամների համար ակնյայտ էր, որ այդ յայտարարութիւնը նշանակում է սպառնալ, որ Հայաստանի տնտեսութեան «կաշին քերթելու» է, քանի որ միայն այդ դէպքում, այդ պայմանով է հնարաւոր ապահովել տնտեսական աճը ներկայիս ճգնաժամային պայմաններում: Այստեղ, իհարկէ, հարկ է մի փոքր պարզաբանում:

Բանն այն է, որ տնտեսական աճի ապահովումը հնարաւոր է նաեւ այլ տարբերակում, ոչ թէ տնտեսութեան «կաշին քերթելով», այլ հակառակը՝ տնտեսութեանը նոր լիցքեր հաղորդելով: Սակայն նոր լիցք հաղորդել, նշանակում է տնտեսութիւն բերել իրական ազատականութիւն, իրական մրցակցութիւն, տնտեսութիւնը դուրս բերել քրէաօլիգարխիկ համակարգի ցանցից: Ակնյայտ է, որ Յովիկ Աբրահամեանն ու նրա կառավարութիւնն այդ ցանցը պահելու, ոչ թէ ցանցից Հայաստանը դուրս բերելու համար են: Որովհետեւ իրենք էլ հանդիսանում են այդ ցանցի ուղիղ շահառուներ, այսինքն՝ խոշոր կապիտալիստներ: Եւ եթէ տնտեսութեանը նոր լիցք չի հաղորդւում, եթէ չի բացւում, այն էլ՝ լայնարձակօրէն չի բացւում մարդկային կապիտալի, մարդկային ներուժի դրսեւորման ճանապարհը, 4.1 տոկոս աճ ապահովելու համար մնում է միայն տնտեսութեան «կաշին քերթելու» տարբերակը:

Յովիկ Աբրահամեանը, փաստօրէն, սպառնում էր անել դա՝ համարելով, որ դրանով կարող է իր «կաշին» փրկել որպէս վարչապետ, հակառակ դէպքում չկատարելով տնտեսական աճի յանձնառութիւնները՝ նա ստիպուած կը լինի թողնել պաշտօնը, Սերժ Սարգսեանը նրան պաշտօնանկ կանի: Յովիկ Աբրահամեանը նոյնիսկ բարկանում էր բոլոր նրանց վրայ, ովքեր կը համարձակուէին կասկածի տակ դնել տնտեսական աճ ապահովելու իր կարողութիւնը: Սակայն հիմա, փաստօրէն, ֆինանսների փոխնախարարը յայտարարել է «Ազատութիւն» ռատիօկայանին, որ հարկային հաւաքագրումները աւելի քիչ կը լինեն, քանի որ աճն էլ նախատեսուածից քիչ է լինելու: Կա՛մ փոխնախարարը գգօնութիւնը կորցրել է եւ փաստօրէն դուրս եկել վարչապետի դէմ, կա՛մ էլ վարչապետի համար է իրավիճակը փոխուել, եւ Սերժ Սարգսեանը նրան խոստացել է որեւէ պատասխանատւութեան առաջ չդնել տնտեսական ցուցանիշների համար, եթէ ապահովուեն հանրաքուէի անհրաժեշտ ցուցանիշները: Իսկ դրանք, ինչպէս Գալուստ Սահակեանն էր նախօրէին հաստատել, կազմում են 650-700 հազար ձայն:

Եթէ Աբրահամեանը ՀՀԿ շտաբի պետի պաշտօնում ապահովի այդքան ձայն, նա կը մնայ վարչապետ երեւի թէ մինչեւ 2017 թուականի խորհրդարանական ընտրութիւնները: Եւ քանի որ այժմ փոխուել է առաջադրանքը, միգուցէ Յովիկ Աբրահամեանի համար այլեւս սկզբունքային խնդիր չէ պնդել տնտեսական աճն ապահովելու հարցը, եւ ֆինանսների փոխնախարարը այդ պատճառով էլ խոստովանել է, որ տնտեսութիւնը պարզապէս ուժ չունի կատարելու պլանճէով սահմանուած խնդիրները, եւ հաւաքագրումները աւելի քիչ կը լինեն:

Ընդհանուր առմամբ, այստեղ, իհարկէ, իրավիճակը յարաբերական է եւ մի կողմից պարզ է, որ Հայաստանին սպասւում է հերթական կեղծուած քուէարկութիւնը եւ ըստ այդմ էլ՝ նաեւ դրա անդրադարձը հասարակական տրամադրութիւնների վրայ եւ խորքային հետեւանքները պետական կեանքի առումով, միւս կողմից՝ եթէ Յովիկ Աբրահամեանը հրաժարւում է ամէն գնով տնտեսական իր նախանշած աճն ապահովելու մտքից, դա նշանակում է, որ գոնէ առժամանակ հանւում է Հայաստանի տնտեսութեան գլխին կախուած դամոկլեան սուրը:

Թէեւ դա էլ, ըստ էութեան, յարաբերական է, քանի որ սուրը հանւում է այսօր, բայց հենց այսօր արդէն, կամ աւելի ճիշտ՝ նախօրէին, այդ սուրը կախուել է 2016-ի Մայիսի համար՝ ակցիզային հարկի 10 տոկոս բարձրացման մասին կառավարութեան օրինագիծը խորհրդարանում օրէնք դարձնելու տեսքով: Ըստ որում՝ սա եւս վկայում է, որ Յովիկ Աբրահամեանը երեւի թէ ստացել է մինչեւ 2017 թուականը մնալու որոշակի երաշխիքներ՝ հանրաքուէի արդիւնքների դիմաց, եւ այդ պատճառով էլ նրա ներկայացրած օրինագիծը մի քանի ամիս առաջ խորհրդարանում արժանանալով բացասական վերաբերմունքի եւ առաջին ընթերցմամբ ընդունելով, այսպէս ասած, պայմանականօրէն, երկրորդ ընթերցումն անցաւ գրեթէ անաղմուկ եւ ակնթարթօրէն, թէեւ սկզբունքօրէն չէր ենթարկուել փոփոխութեան: Այսինքն՝ խորհրդարանը Աբրահամեանի առաջ որեւէ արգելքներ եւ խոչընդոտներ չդրեց, քանի որ փոխուել են նրա ու Սերժ Սարգսեանի պայմանաւորուածութիւնները: Եւ այս համատեքստում էլ հաւանական է, որ Սարգսեանը վարչապետի պաշտօնը թանկ գնով վերավաճառել է Յովիկ Աբրահամեանին:

Խնդիրն այն է, որ, մեծ հաշուով, Սարգսեանի համար վարչապետ փոխելը ներկայումս խնդիր է, քանի որ հազիւ թէ գտնուի մի կամիկաձէ, որը ներկայումս տնտեսութեան համար պատասխանատուութիւն ստանձնի: Այսինքն՝ Սերժ Սարգսեանը ընդհանուր առմամբ երեւի թէ այնքան էլ շահագրգռուած չէր տնտեսութեան ներկայիս վիճակի անմխիթարութեան համար պատրաստի, արդէն գործող պատասխանատուին փոխելու հարցում: Միեւնոյն ժամանակ, նկատի ունենալով հասարակական տրամադրութիւնները Հայաստանում, ինչ-որ իմաստով կամիկաձէ է պահանջւում նաեւ սահմանադրական «այո»-ի 700 հազարը ստանալու համար: Սերժ Սարգսեանին, փաստօրէն, յաջողուել է մէկտեղել այս երկու պահանջը՝ ի դէմս Յովիկ Աբրահամեանի:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

# Հայաստանին Ծանր Որոշումներ Են Սպասւում

ՆԱԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Ո՞վ է «պատուիրել» Հայաստանում սահմանադրական փոփոխութիւնները. Արեւմո՞ւտքը, թէ Ռուսաստա՞նը

Հայաստանի հասարակականքաղաքական ասպարէզում դեռ քննարկւում է Ռուսաստանի Դաշնութեան խորհրդի խօսնակ Վալենտինա Մատուիենկոյի Երեւանեան այցի հետ կապուած պատմութիւնը: Ինչպէս յայտնի է դարձել, ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը Մատուիենկոյին խնդրել է կոչ անել հայ գործընկերներին չփոխել Սահմանադրութիւնը, որին նա պատասխանել է, որ դա Հայաստանի ինքնիշխան գործն է:

Ընդունուած է կարծել, որ Հայաստանում քիչ թէ շատ նշանակալի նախաձեռնութիւններն արտաքին ուժերի «պատուէրն են», եւ հիմա շատերը հարց են տալիս, թէ ով է «պատուիրել» սահմանադրական փոփոխութիւնները Հայաստանում՝ Ռուսաստա՞նը, թէ Արեւմո՞ւտքը: Դատելով Մատուիենկոյին Լեւոն Զուրաբեանի դիմումից, ՀԱԿ-ը կարծում է, որ դա ԱՄՆ-ի գործն է, եւ միայն Մոսկուան կարող է կանգնեցնել դա:

Իր հերթին, ուժեր կան, որոնք կարծում են, որ բարեփոխումների հեղինակը Մոսկուան է: Այդ եզրակացութեան հիմքում ընկած է այն, որ Սահմանադրութիւնը բարեփոխելու մտադրութեան մասին Սերժ Սարգսեանը յայտարարել է Եւրասիական Միութեանը Հայաստանի անդամակցելու որոշման կայացումից յետոյ:

Կարծիքների այսպիսի բազմազանութիւնը խօսում է այն մասին, որ սահմանադրական բարեփոխումները, հնարաւոր է, ներքին, աւելի ճիշտ՝ Սերժ Սարգսեանի անձնական նախաձեռնութիւնն է, եւ համաշխարհային կեդրոնները ստիպուած են պարզապէս դիրքորոշում յայտնել այդ նախաձեռնութեանը:

Նախագահականից խորհրդարանական համակարգի անցումը, անկասկած, առաջին հերթին լուծում է Սերժ Սարգսեանի խնդիրները: Փոխելով քաղաքական համակարգը՝ Սերժ Սարգսեանը «ապահովագրում է» իրենց յաջորդ գերնախագահից:

Բարեփոխումների գլխաւոր նպատակը, սակայն, դա չէ: Սերժ Սարգսեանն «ապահովագրում է» այն դէպքի համար, եթէ Ռուսաստանը, ինչպէս 2013 թուականի Օգոստոսին, փորձի ստիպել հերթական հակապետական որոշումը կայացնել: Սարգսեանն իր վրայից հանում է պատասխանատուութիւնը եւ փորձում է բոլորի միջեւ կիսել այն: Այդ առումով նոր Սահմանադրութիւնում հիմնական կէտը կը լինի պարտադիր հանրաքուէն վերազգային կառոյցներին Հայաստանի միանալու հարցով:

Անկասկած, եւ Ռուսաստանը, եւ Արեւմուտքը որոշակի վերաբերմունք ունեն Սերժ Սարգսեանի այդ մտադրութեանը: Անկասկած, երկու կողմերին էլ ապագայ գերնախագահի հարցը հետաքրքրում է միայն Հայաստանի քաղաքականութեան վրայ ազդելու տեսանկիւնից: Տարբերութիւնը միայն այն է, թէ Արեւմուտքն ու Ռուսաստանն ինչի համար են օգտագործելու իրենց ազդեցութիւնը:

Հայաստանն անդամակցել է Եւրասիական Միութեանը, ՀԱՊԿ անդամ է եւ անվերապահ ընդունում է Մոսկուայի գերակայութիւնը: Սակայն, ինչպէս ռուս վերլուծաբաններն են գրում, Մոսկուան Երեւանը համարում է ամէնից անյուսալի գործընկերը, որը ցանկացած պահի կարող է «դուրս պրծնել»: Այդ պատճառով Մոսկուային պէտք է աւելի ամուր կապել իրեն Հայաստանը: Կապելու մօտակայ գործողութիւնը լինելու է համատեղ ՀՕՊ ստեղծումը, իսկ դրանից յետոյ կը սկսուի «սերտ ինտեգրացիայի» փուլը, որը նշանակում է Հայաստանի փաստացի մուտք Ռուսաստանի կազմ: (Հիմա այդ գործընթացը տեղի է ունենում Աբխազիայի ու Հարաւային Օսիայի հետ, իսկ Ռուսաստանը Հայաստանին վաղուց մի շարքում է դասում

Շար.ը էջ 18

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Գալուստ Սահակեան. Ծառուկեանի գործում խառն էր նաեւ Տէր-Պետրոսեանի մատը

Գագիկ Ծառուկեանը քաղաքականութիւնից հեռացաւ, որովհետեւ հակասահմանադրական կոչեր էր անում, նաեւ ժողովրդին դրդելու ճանապարհով էր գնում: Այս մասին, Նոյեմբերի 9-ին, Աժ-ում լրագրողների հետ զրոյցում յայտարարել է խորհրդարանի խօսնակ Գալուստ Սահակեանը:

Անդրադառնալով ընդդիմութեան պնդումներին, թէ քաղաքական դաշտը ՀՀԿ-ն է ամայացրել, որի թարմ օրինակը իշխանափոխութեան լծուած Գագիկ Ծառուկեանի նկատմամբ փետրուարեան «Ջարդն» էր, Սահակեանն արձագանգել է. «Քաղաքական պրոցեսներն էնպիսին են, որ եթէ քաղաքական ուժերը տեսնում են վտանգներ կան, հակասահմանադրական կոչերի պայմաններում պիտի ընթանայ. Ես կարծում եմ՝ վերջին իր (Ծառուկեանի-խմբ) հանրային ընկալումները, վերջին կոչերը միգուցէ, կարելի էր համարել հրապարակախօսական կոչ, բայց ասում էր՝ եթէ այսպէս, ուրեմն այսպէս»:

Գալուստ Սահակեանը հրաժարուել է ոտքի վրայ պարզաբանել Ծառուկեանի այն յայտարարութիւնը, թէ քաղաքական



ՀՀ Խորհրդարանի խօսնակ Գալուստ Սահակեան

պայքարից հեռացաւ՝ արիւն թափելու վտանգներից խուսափելու համար: «Ես չեմ ուզում դա վերլուծել, որովհետեւ դուք ուզում էք ոտքի վրայ եւ արիւնը որոշել, եւ թափողին որոշել, եւ ամէն ինչ: Ես ուզում եմ ասել՝ քաղաքական հանգամանքներն այնպիսին էր, որ ժողովրդին դրդելու ճանա-պարհով էին գնում, եւ էդտեղ ոչ միայն պիտի մեղադրել Ծառուկ-եանին, այլ էդտեղ կար Լեւոն- Տէր Պետրոսեանի մատը, այնքա՞ն մատեր կային»:

## Ոստիկանութեան եւ ԱՎԾ-ի Տուեալները Չեն Համընկնում Ընտրողների թիւի Շուրջ

Սահմանադրական փոփոխութիւնների հանրաքուէից 30 օր առաջ Ոստիկանութեան հրապարակած ընտրողների ընդհանուր թիւը 270 հազարով աւելի է Հայաստանում չափահաս, այսինքն՝ ընտրելու իրաւունք ունեցող քաղաքացիների թուից:

Այսպէս, հանրաքուէին քուէարկելու իրաւունք ունեցողների թիւն է 2 միլիոն 554 հազար, մինչդեռ, ըստ Ազգային վիճակագրական ծառայութեան, Հայաստանում 18 տարին լրացած բնակչութեան թիւը 2 միլիոն 283 հազար է: Ընդ որում, խօսքը ոչ թէ առկայ բնակչութեան, այլ՝ մշտական բնակուողների մասին է, որը ներառում է նաեւ երկրից ժամանակաւորապէս բացականերին:

Հելսինկեան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունցին այս իրավիճակն արտառոց է թւում:

«Մենք ունենք խնդիր թուերի հետ, եւ որեւիցէ մարմին՝ թէ՛ ԱՎԾ-ն, թէ՛ ոստիկանութիւնը, թէ՛ կենտրոնական ընտրական յանձնաժողովը պէտք է տրամաբանական պատասխան տան՝ ինչով է պայմանաւորուած պաշտօնական տարբեր աղբիւրների կողմից հրապարակուած թուերի միջեւ այդ ակնյայտ հակասութիւնը: Որովհետեւ մենք ակնյայտօրէն տեսնում ենք, որ ըստ նպատակահարմարութեան թուերի հետ ինչ-որ շարժ է տեղի ունենում»,- ասաց իրաւապաշտպանը:

Կրկին ըստ Ոստիկանութեան ներկայացրած թուերի՝ 2008-ի նախագահական ընտրութիւններից մինչեւ 2015-ի հանրաքուէ, Հայաստանում ընտրելու իրաւունք ունեցող քաղաքացիների թիւն աւելացել է 226 հազարով՝ չնայած այն բանին, որ զուգահեռ նոյն ժամանակահատուածում, ըստ ԱՎԾ-ի, Հայաստանի մշտական բնակչութեան թիւը նուազել է, մասնաւորապէս, չափահասների թիւը պակասել է 54 հազարով:

«Նոյնիսկ ընտրողների թիւի աճը բնակչութեան թիւի ոչ համարժէք աճի կամ ընդհանրապէս աճի բացակայութեան պարագայում ուղղակի անհեթեթութիւն է»,- ասում է Սաքունցը:

Իրաւապաշտպանը բերում է Վանաձորի օրինակը: Այնտեղ էլ 2008-ից ի վեր քուէարկողների թիւը ընտրութիւնից ընտրութիւն աւելացել է.- «Վանաձոր քաղաքում տեսնում ենք, որ դպրոցականների թիւը 2006-2012 թուականների ընթացքում 45 տոկոսով կրճատուել է: Այսինքն՝ դրանք այն երեխաներն են, որոնք պէտք է ընդգրկուեն [ընտրացուցակներում], 2006, 2007 թուականի աշակերտների մի մասը պէտք է ընտրողներ դառնան: Եթէ նրանց թիւը նուազում է, ընտրողների թիւն էլ պիտի նուազի, չի կարող ընտրողների թիւը այլ տեղից աւելանայ»:

## ԱՎԾ Պետը Վերջերս Հրաժարականի Դիմում Է Ներկայացրել. Նա Էլ Չի Կարողանում Թիւեր Նկարել

«Ժամանակ» թերթը գրում է. «Մեր տեղեկութիւններով՝ Ազգային վիճակագրական ծառայութեան ղեկավար Ստեփան Մնացականեանը վերջերս հրաժարականի դիմում է ներկայացրել վարչապետ Յովիկ Աբրահամեանին, բայց մերժուել է:

Բանն այն է, որ Ս. Մնացականեանը վարչապետին դժգոհել է, որ այլեւս չի կարող ցանկալի տնտեսական աճի համար թիւեր ապահովել, որ բոլոր ոլորտներում անկումներ կան, բայց ինքը ստիպուած է հակառակը ցոյց տալ, քանի որ իրենից դա են պահանջում իշխանութիւնները»:

## Մարդիկ «Այո»-ի Համար 5 Հազար Դրամ Են Ուզում Քուէարկութեան Գալու Համար

«Ժամանակ» թերթը գրում է. «Հիմնական խնդիրը, որ կանգնած է սահմանադրական փոփոխութիւնների օգտին քարոզչութիւն իրականացնողների առաջ հասարակութեան պասիւութիւնն ու անտարբերութիւնն է ինչպէս սահմանադրական փոփոխութիւնների, այնպէս էլ դրա քարոզիչների նկատմամբ:

Բազմաթիւ համայնքապետեր պնդում են, որ մարդկանց ընտրատեղամասեր բերելը ուղղակի անհնար գործ է լինելու, քանի որ մարդիկ չգիտեն թէ ինչ ասել է սահմանադրական փոփոխութիւններ: Աւելի անկեղծանալով՝ նրանք պնդում են, որ մարդկանց ինչ-որ չափով շահագրգռելու եւ ընտրատեղամասեր բերելու համար պէտք է փող բաժանել, քանի որ մարդիկ արդէն սովորել են ընտրատեղամաս գնալ եւ քուէարկել փողով, իսկ երբ փողի գործոնը բացակայում է, նրանք ուղղակի կորցնում են հետաքրքրութիւնը ցանկացած ընտրութեան նկատմամբ: «Գիւղացիները գիտեն, որ եթէ քուէարկութիւն է, ապա պէտք է փող բաժանուի, երբ նրանց ասում ես, որ այս անգամ թեկնածու չկայ, որ փող բաժանի, որ սա սահմանադրական հանրաքուէ է, ասում են, դէ ում որ պէտք է թող նա էլ գնայ քուէարկի»,- ասաց մեր զրուցակից գիւղապետերից մէկը:

Մեր զրուցակիցը իր ղեկավարած գիւղի օրինակով կարծում է, որ թէեւ «ոչ»-ի կողմնակիցները քիչ են, բայց նրանք աւելի մոտիվացուած են. «Նրանք համարում են, որ իրենք դէմ են քուէարկելու, քանի որ սա իշխանութիւնների նախագիծն է, եւ իրենք էլ դէմ են այս իշխանութիւններին: Բայց այդպէս մտածում է գիւղացիների 5-10 տոկոսը, մնացած մասը ընդհանրապէս ոչ դէմ է ուզում քուէարկել, ոչ կողմ»:

Արդեօք դա նշանակում է, որ եթէ այս անգամ փող չբաժանուի, ապա հանրաքուէն կարող է տապալուել, քանի որ մարդիկ չեն գնա ընտրատեղամասեր: Մեր զրուցակից համայնքապետերն ասացին, որ հանրաքուէն գիւղում կարելի է անցկացնել շատ մեծ յաջողութեամբ նաեւ առանց գիւղացիների մասնակցութեան: Շատերը յիշում են, որ իրենց գիւղում 2005թ. հանրաքուէն աւարտուել էր նախատեսուածից 4-5 ժամ առաջ:

Գիւղապետերից մէկը պատմեց, թէ ինչպէս է եղել հանրաքուէն 10 տարի առաջ. «Այն ժամանակ նստեցինք յանձնաժողովի անդամներով, նախագահով, բոլոր քուէաթերթիկները մի երկու ժամում գծեցինք, ցուցակները ստորագրեցինք, արձանագրութիւնը կազմեցինք եւ քուէատուփով, արձանագրութիւններով ես, յանձնաժողովի նախագահն ու քարտուղարը գնացինք ընտրատարածքային ընտրական յանձնաժողով: Տեղ հասանք երեկոյեան 5-ի կողմերը: Ընտրատարածքային յանձնաժողովի նախագահը մեզ տեսաւ, սարսափեց, հարցրեց, թէ՝ էս ինչ է եղել, ասեցի մեր մօտ վերջացել է: Ասեց այդպիսի բան իրաւունք չունէք անելու, մինչեւ 8-ը պէտք է տեղամասը բաց մնայ, օրէնքով է այդպէս: Ես էլ ասեցի, որ մեր գիւղում բոլորը քուէարկել են, բաց մնար ում համար: Ասեց՝ չեմ կարող ընդունել, գնացէք մի տեղ սպասէք, 8-ից յետոյ կը գաք: Ստիպուած գնացինք նստեցինք մի կտոր հաց կերանք՝ մինչեւ այդ 3 ժամը անցաւ, նոր բերեցինք յանձնեցինք, վերջացրեցինք: Նոյնը հիմա ենք անելու, կարող եմ ասել՝ մի 80 տոկոս «այո» կը լինի, 20 տոկոս «ոչ», բայց որ գիւղացիներին հնարաւոր չի ընտրատեղամաս բերել՝ դա հաստատ է»:

## Հայաստանի Երիտասարդութեան Մօտ Ընտանիք Ստեղծելը երկրորդ պլանում է

Երիտասարդութեան հիմնական խնդիրն այսօր աշխատանք ձեռք բերելն է. Երիտասարդութեան համաշխարհային օրուան ընդառաջ յայտարարել է սոցիոլոգ Ահարոն Ադիբեկեանը: Երկրորդ պլանում նոր՝ ընտանիք ստեղծելն է:

«Եթէ առաջ աղջիկներն ամուսնանում էին միջինը 22 տարեկանում, տղաները՝ 24, հիմա աղջիկները 25-ից վեր են, իսկ տղաները մօտենում են 30 տարեկանին: Դա նման է Գերմանիայի իրավիճակին՝ առաջին համաշխարհային պատերազմից յետոյ. Այն ժամանակ փեսացուների միջին տարիքը՝ 30 տարեկան էր, նոյնը կրկնւում է: Պատերազմական վիճակում գտնուող երկիրը, տնտեսական անկում ապրող երկիրը չի կարող ունենալ բարեկեցիկ կեանք, միշտ պրոբլեմներ է ունենալու»,- ասաց Ահարոն Ադիբեկեանը:

Հոգեբան Աննա Բադալեանն էլ աւելացնում է, որ ընտանիք ստեղծողները պատասխանատուութեան զգացում պէտք է ունենան, եւ պահ է լինում, որ նրանք ամուսնանում են ուղղակի ամուսնանալու համար. «Ամէն 6-րդ զոյգը բաժանւում է»:

## Վոլոդյա Աւետիսեանը Դադարեցրել Է Հացադուլը

6,5 տարուայ ազատազրկման դատապարտուած ազատամարտիկ Վոլոդյա Աւետիսեանն Նոյեմբերի 9-ին դադարեցրել է 10 օր առաջ սկսած հացադուլը:

«Ի պաշտպանութիւն Վոլոդյա Աւետիսեանի» նախաձեռնութեան մէկ տասնեակ անդամներ Վոլոդյա Աւետիսեանին ուղղուած նամակ էին յանձնել «Վարդաշէն» ՔԿՀ՝ իրենց մարտական ընկերոջը յորդորելով դադարեցնել հացադուլը:

Յիշեցնենք, որ Վոլոդյա Աւետիսեանը հացադուլ էր յայտարարել հոկտեմբերի 30-ին՝ այն բանից յետոյ, երբ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկէտ ազատելու, պատժի չկրած մասն աւելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ յանձնաժողովը երկրորդ անգամ մերժել էր իր դիմումը:

Նշենք, որ Վոլոդյա Աւետիսեանն արցախեան ազատամարտի մասնակից է, եղել է Լեոնիդ Ազգալդեանի աջ ձեռքը, ունի 6 զաւակ, որոնցից 3-ն անչափահաս են, ընտանիքն էլ ծանր սոցիալական պայմաններում է ապրում:

## ԼՈՒՐԵՐ

### ՆԱՏՕ-ն Յստակ Գնահատական Չի Տալիս Թուրքիայի Կողմից Հայաստանի Օդային Սահմանը Հատելու Դէպքերին

ՆԱՏՕ-ի ներկայացուցիչները յստակ պատասխան չեն տալիս, թէ ինչու կառոյցը չի արձագանգել դաշինքի անդամ Թուրքիայի կողմից մէկ ամիս առաջ Հայաստանի օդային սահմանը հատելու դէպքերին:

«Կայ յստակ ըմբռնում, որ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը ռազմավարական լուրջ օգուտներ կ'ունենայ տարածաշրջանի համար, բայց ես չեմ կարծում, որ ՆԱՏՕ-ն կարող է այս խնդրին հասնելու առաջնագծում լինել»,- ՆԱՏՕ-Հայաստան համագործակցութեան վերաբերեալ քննարկմանը ասաց Հիւսիսատլանտեան դաշինքի միջազգային աշխատակազմի քաղաքական հարցերի եւ անվտանգութեան քաղաքականութեան բաժնի ներկայացուցիչ Շտեֆեն Էլգերսման:

Միջադէպի վերաբերեալ Հայաստանի խորհրդարանի պատգամաւոր Թեւան Պօղոսեանը հարց էր բարձրացրել նաեւ ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի տարեկան նիստի ժամանակ՝ կրկին չստանալով յստակ պատասխան:

«ՆԱՏՕ-ն այն կոլեկտիւ անվտանգութեան կազմակերպութիւններից է, որ հիմնուած է արժէքների վրայ, բայց, այնուամենայնիւ, իր գործընկեր ու անդամ երկրներին երբեւէ չի փորձում հանրային պարսավանքի ենթարկել: Վստահ եմ, որ եղել են հեռախօսազրոյցներ, ճնշումներ, որ այդպիսի բաներ չի կարելի անել, բայց միեւնոյն ժամանակ հանրայնօրէն այդ մասին չի խօսւում», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց Պօղոսեանը:

Թուրքական ռազմական ուղղաթիռները Հայաստանի օդային սահմանը հատել էին երկու անգամ՝ Հոկտեմբերի 6-ին եւ 7-ին՝ 2-4 րոպէ տեւողութեամբ պտտուելով Արմաւիրի մարզի Բաղրամեանի հատուածում: Թուրքական կողմը, Երեւանի հարցմանն ի պատասխան, պնդել էր, թէ ուղղաթիռները սահմանը հատել են «եղանակային վատ պայմանների պատճառով»: Հայաստանի արտաքին գործերի նախարարութիւնն ու Պաշտպանութեան նախարարութիւնը մինչ օրս միջադէպին պաշտօնապէս չեն արձագանգել:

### Ճէյմս Ուորլիք.«Հակամարտութեան Կողմերի Մօտ Բացակայում Է Քաղաքական Կամքը»

ԼՂ հակամարտութեան կարգաւորման հարցում խաղաղութեան ամենամեծ խոչընդոտը բանակցութիւնների միջոցով խնդրի արդարացի եւ տեւական կարգաւորմանը հասնելուն ուղղուած քաղաքական կամքի բացակայութիւնն է Հայաստանում եւ Ատրպէյճանում: Այս մասին «Արմենպրես»-ին տուած հարցազրոյցում նշել է ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ճէյմս Ուորլիքը:



ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ճէյմս Ուորլիք

Հարցին, թէ որոնք են այն խնդիրները, որ ներկայ դրութեամբ խոչընդոտում են հակամարտութեան խաղաղ կարգաւորմանն ու համաձայնագրի ստորագրմանը, Ուորլիքը պատասխանել է.

«Խաղաղութեան ամենամեծ խոչընդոտը բանակցութիւնների միջոցով խնդրի արդարացի եւ տեւական կարգաւորմանը հասնելուն ուղղուած քաղաքական կամքի բացակայութիւնն է Հայաստանում եւ Ատրպէյճանում:

Մենք բազմիցս նշել ենք, որ բանակցային ճանապարհով ձեռք բերած կարգաւորումը տեւական ժամանակ այս հակամարտութիւնից տուժած տարածաշրջանին կը բերի խաղաղութիւն եւ բարգաւաճում: Համանախագահները կը շարունակեն այս հակամարտութեան կարգաւորմանն ուղղուած իրենց ջանքերն այնքան ժամանակ, քանի դեռ կողմերը կարեւորում են մեր դերը, բայց վերջնական որոշումը պէտք է կայացնեն նախագահները»:

### Թուրքիայում Յայտնի Հայկական Վանքը Որպէս Ախոռ Են Օգտագործում



Անիի մօտ գտնուող հայկական վանքը ախոռի վերածուած

Ներկայում Թուրքիայի տարածքում գտնուող միջնադարեան հայոց մայրաքաղաք Անիից մի քանի կմ հեռաւորութեան վրայ գտնուող յայտնի Բագնայրի վանքը տեղացիները որպէս ախոռ են օգտագործում:

Քրդական DIHA գործակալութեան թղթակիցը եղել է Կարս նահանգի այն գիւղում, որտեղ կիսաւեր վիճակում իր գոյութիւնն է շարունակում Վահրամ Պահլավունու կողմից կառուցած Բագնայրի վանքը:

Քուրդ թղթակցին զարմացրել է այն հանգամանքը, որ 989 թուականին կառուցուած վանքը պետական պահպանութեան ներքոյ չէ, իսկ գիւղացիներն էլ այն որպէս ախոռ են օգտագործում:

Գիւղացիները վանքի քարերն օգտագործել են իրենց տները, ախոռներն ու ցանկապատերը կառուցելու համար:

Թղթակցի հետ զրոյցում գիւղացիները փորձել են արդարանալ՝ ասելով, թէ պետութիւնը չի կարողանում պահպանել եկեղեցին, իրենք ինչպէ՞ս պահպանեն:

### Հայաստանի Պաշտպանութեան Նախարարը Անընդունելի Է Համարում ԵԽԽՎ Յանձնաժողովի Որոշումը

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սեյրան Օհանեանն անընդունելի է համարել ԵԽԽՎ քաղաքական յանձնաժողովի որոշումը, որը հաւանութիւն է տուել Ռոբերդ Ուոլթերի զեկոյցին:

Լրագրողների հետ զրոյցում, պատասխանելով այն հարցին, թէ ինչ է մտածում ԵԽԽՎ յանձնաժողովի որոշման մասին, Հայաստանի պաշտպանական գերատեսչութեան ղեկավարը ընդգծել է, որ «մենք բոլորս պիտի համատեղ աշխատենք մեր ռազմա-քաղաքական ղեկավարութեան նախանշած նպատակներին հասնելու համար, ի շահ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ժողովրդի»:

«Բոլոր այլ տեսակէտները, որոնք կարող են միակողմանի որոշումների հանգեցնել կամ էլ միակողմանի արարքներ պարտադրել, մեզ համար անընդունելի են: Մենք համարում ենք, որ հակամարտութիւնը կարող է կարգաւորուել խաղաղ քաղաքական եղանակով, երկխօսութեան միջոցով եւ վստահութեան մթնոլորտում», - ասել է նախարարը՝ յաւելելով, որ դա պիտի տեղի ունենայ միջազգային հանրութեան աջակցութեամբ:

Յիշեցնենք, որ Ռոբերդ Ուոլթերի զեկոյցը առանձնանում է զարմանալի միակողմանիութեամբ, ոչ օբյեկտիւութեամբ եւ կանխակալութեամբ: ԱՄՆ-ից ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Ճէյմս Ուորլիքը նոյնիսկ բացասական վերաբերմունք է արտայայտել ԵԽԽՎ-ի՝ բանակցային գործընթացին միջամտելու փորձերին:

### Ռուսաստան Եւ Հայաստան Քննադատեցին

Շարունակուած էջ 1-էն

տար ինքնիշխանութիւնը»:

Հայաստանի մէջ այս զեկոյցը արժանացաւ սուր քննադատութեան: Աւուլիսի ընթացքին Նալբանդեան կասկածի տակ առաւ բրիտանացի պատգամաւորի անկաշառ ըլլալը. - «Մի մարդ, ով երկար տարիներ եղել է բրիտանական խորհրդարանում Ատրպէյճանի հետ բարեկամութեան խմբի անդամ, ով, բրիտանական մամուլի հրապարակման համաձայն, ֆինանսաւորւում է Պաքուից՝ համապատասխան ֆոնդերից, չէր կարող ունենալ անկողմնակալ դիրքորոշում»:

Ե՛ւ Լավրով, ե՛ւ Նալբանդեան ըսին, որ բանակցութիւններու ժամանակ մանրամասնօրէն քննարկած են Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծուած իրավիճակը:

«Մենք կ'աջակցինք Երեւանի դիրքորոշումին, ըստ որու՝ Լեռնային Ղարաբաղի խնդիրը պէտք է կարգաւորուի բացառապէս խաղաղ ճանապարհով: Համոզուած ենք, որ պէտք է շարունակել ջանքերը՝ աջակցելու կողմերուն, որպէսզի անոնք մշակեն փոխադարձաբար ընդունելի հիմք կարգաւորման համար», - յայտարարեց Ռուսաստանի արտաքին գործոց նախարարը:

Երեւանի մէջ իր կարճատեւ կեցութեան ընթացքին Սերգէյ Լավրով հանդիպում ունեցաւ նաեւ Նախագահ Սերժ Սարգսեանի հետ:

### Վթարի Ենթարկուած Ավտոբուսի 32 Ուղեւորները Ժամանեցին Երեւան

Ռուսաստանի Տուլայի մարզում տեղի ունեցած ավտովթարից տուժածները կառավարութիւնից դրամական փոխհատուցում կը ստանան:

Տուլայի մարզում վթարի ենթարկուած ավտոբուսի ուղեւորներից 32-ը յատուկ չուերթով ժամանեցին Երեւան: Նրանցից 8-ը, որոնց վիճակը գնահատուել էր ծանր, շտապօգնութեան մեքենաներով տեղափոխուեցին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ հիւանդանոց: 8 զոհուածների աճիւնները միանգամից տեղափոխուեցին դիահերձարան:

Յիշեցնենք, Մոսկուայից Երեւան ուղեւորուող ավտոբուսը վթարի է ենթարկուել Նոյեմբերի լոյս 3-ի գիշերը: Ավտոբուսում 61 ուղեւոր կար:

Տուժածներից 12-ը շարունակում են մնալ Ռուսաստանի հիւանդանոցներում: Նրանք հիմնականում գանգուղեղային տրավմաներ, ողնաշարի, կողերի, կոնքի կոտրուածքներ, պատռուած, բաց վէրքեր, բաց կոտրուածքներ ունեն: Նրանցից երկուսի վիճակը ծայրահեղ ծանր է, մէկն այսօր վիրահատուել է: Այս մասին տեղեկացրեց առողջապահութեան նախարար Արմէն Մուրադեանը, ով տրանսպորտի եւ կապի նախարար Գագիկ Բեգլարեանի հետ մեկնել էր Ռուսաստան:

Մուրադեանը նաեւ հաղորդեց, որ Ռուսաստանի առողջապահութեան նախարարը երեք ժամը մէկ տեղեկութիւններ է հաղորդում վիրաւորների մասին:

«Մենք այսօր չենք կարող որակաւորել՝ մեքենայի թարմութիւնի՞ց է վթարը եղել, մարդկային գործօնն է, թէ՞ տեխնիկական ինչ-որ այլ խնդիրներ կան, դրա համար կոնկրետ մասնագիտական պատասխաններ ինձնից մի սպասէք», - ասաց տրանսպորտի եւ կապի նախարար Գագիկ Բեգլարեանը:

# «ԱՐՄԷՆ ՃԱՄԲԱՐ»Ը ԿԱՐԾԵՍ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱԿՈԹՈՂ ԸԼԼԱՅ



Սթամպուլի Թուզլա շրջանին մէջ գտնուող՝ «Արմէն ճամբար» («Քամփ Արմէն») անուանումով յայտնի որբանոց-ճամբարը, որ բռնագրաւուած էր թրքական պետութեան կողմէ 1980-ականներուն, անցեալ շաբաթ վերադարձուած է հայկական համայնքին: Թուրքիոյ մէջ հայ երիտասարդներու կողմէ հիմնադրուած «Նոր Զարթօնք» հասարակական կազմակերպութիւնը մասնակցած է ճամբարի վերադարձման պայքարին: «Եթէ ցանկայինք Թուրքիոյ մէջ Հայոց ցեղասպանութեան նուիրուած յուշակոթող կանգնեցնել, աւոր կարիքը չէր ըլլար: «Արմէն ճամբարը» կարծես հէնց այդ յուշակոթողը ըլլայ»,-

Հայաստանի հանրային ռատիոյի հաղորդմամբ՝ Repairfuture.net-ին տուած հարցազրոյցին ըսած է «Նոր Զարթօնքի» գործիչ Սայաթ Թեքիր: «Արմէն ճամբարի պայքարին բազմաթիւ մարդիկ մասնակցած են, եւ այս մարդկանց թուաքանակ քաղաքական հարթակին վրայ չէր երեւցած: Պայքարը քաղաքականացուցած էին մարդիկ: Մենք «Արմէն ճամբարը» վերածած էինք վայրի մը, ուր հայերուն վերաբերեալ իւրաքանչիւր հարցի մասին կարելի էր խօսիլ:

Մենք քննարկումներ կամ մշակոյթի եւ պատմութեան վերաբերեալ ձեռնարկներ կը կազմակերպէինք այնտեղ: Մենք այն անընդհատ կենդանի կը պահէինք», - ըսած է գործիչը:

Ըստ անոր՝ պայքարի 100-րդ եւ 121-րդ օրերուն երկու յարձակումներ եղած են: «Պատճառը յատկապէս ընտրութիւններու արդիւնքով լարուած մթնոլորտն էր, երբ կ՚աշխուժանան ազգայնամոլութիւնը եւ ցեղապաշտական հակումները. «Արմէն ճամբար» վերածուած էր թիրախի»,- ըսած է Թեքիր:

«Արմէն ճամբար»-ը, որ կառուցուած է հայ որբերու աշխատանքով, թրքական պետութեան որոշումով փակուած է 1983-ին: Ճամբարին մէջ բնակող երեխաները մասնակցած են շինարարական աշխատանքներուն. անոնք աւազ կրած են ծովէն, որով ալ կառուցուած է ան: Իշխանութիւնները երբեք թոյլ չեն տուած վերանորոգել որբանոցը, որուն պատճառով այն կը գտնուի անմխիթար վիճակի մէջ: 2015 Մայիս 6-ի առաւօտեան ճամբարի ներկայիս սեփականատիրոջ նախաձեռնութեամբ սկսած էր ճամբար-մանկատան քանդումը, սակայն կարճ ժամանակ անց Թուրքիոյ հայկական համայնքի սկսած բողոքի լայնածաւալ ձեռնարկներու շնորհիւ շինութեան քանդումը ժամանակաւորապէս հնարաւոր եղաւ դադրեցնել: Հոկտեմբեր 27-ին ճամբարի սեփականութեան վկայականը յանձնուած է Կետիկփաշայի հայ աւետարանական եկեղեցւոյ հիմնադրամին:

# «ԱԿՕՍ»-ի ՀԱՄԱՐ ԳՐՈՂ ԱՏՐՊԷՅՃԱՆՑԻ ԼՐԱԳՐՈՂԸ ՄԱՀՈՒԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ՀԵՌԱՑԱԾ Է ԻՐ ԵՐԿՐԷՆ



Ատրպէյճանցի լրագրող եւ պլոքըր Արզու Կէյպուլաեւան, որ համագործակցած է Foreign Policy եւ Al Jazeera հեղինակաւոր պարբերականներուն հետ, մահուան սպառնալիքներ ստացած է իր համերկրացիներէն՝ Թուրքիոյ մէջ գործող «Ակօս» հայկական շաբաթաթերթին համար յօդուածներ գրելուն պատճառով, կը գրէ Tert.am-ը:

Լրագրողը նոյնիսկ ստիպուած էր տեղափոխուելու Ատրպէյճանէն՝ հաստատուելով Սթամպուլ: Աղբիւրը կը մանրամասնէ, որ Կէյպուլաեւայի դէմ ուղղուած արշաւը սկսած է փոքրիկ թուացիկներու տարածումով, որուն ետեւ կանգնած էր Ատրպէյճանի պետական մետիադաշտը: Իր երկրին մէջ մարդու իրաւունքներու անմխիթար վիճակի մասին պարբերաբար գրող, լրագրողը համացանցով մահուան սպառնալիքներ ստանալէ ետք յստակ գիտակցած է, որ իրեն համար այլեւս ապահով չէ հարազատ երկրին մէջ մնալն ու տեղափոխուած է:

Թէեւ ատրպէյճանական իշխանութիւնները ճնշում կը գործադրեն Կէյպուլաեւայի՝ Ատրպէյճան մնացած ընտանիքի անդամներուն վրայ, այնուհանդերձ՝ 32-ամեայ լրագրողը, անտեսելով բոլոր վտանգները, կը շարունակէ արծարծել Ատրպէյճանի մէջ խօսքի ազատութեան եւ մարդու իրաւունքներու պաշտպանութեան հրատապ նիւթերը:

Իր հարցազրոյցներէն մէկուն ընթացքին Կէյպուլաեւան պատմած է, որ իր նկատմամբ ճնշումներու ու սպառնալիքներու հիմնական պատճառներէն մէկը հայկական «Ակօս» շաբաթաթերթին հետ համագործակցութիւնն էր: »Մահուան վերաբերեալ առաջին սպառնալիքը ստացած եմ 2014-ի Հոկտեմբերին: Հաղորդագրութեան մէջ նշուած էր, թէ ինծի՝ «դաւաճանիս», քանի օր մնացած է ապրելու եւ ուր պիտի թաղեն գիս: Անոր յաջորդած են նմանատիպ բովանդակութեամբ անթիւ-անհամար նամակներ, որոնք ես այլեւս ի վիճակի չէի կարդալ: Յետոյ սպառնալիքներն ու ստոր վիրաւորանքները տարածուեցան նաեւ հօրս, մօրս, եղբօրս վրայ, ու ես վճռեցի հեռանալ Ատրպէճանէն»,- նշած է Կէյպուլաեւան:

# ԿԱՐՕ ՊԱՅԼԱՆ. «ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ ՀԵՌԱՑՐԵՑ ՄԵԶԱՆԻՑ»



Կարօ Պայլանը «Ակօս»-ին տուած հարցազրոյցի ժամանակ, որը թողարկուել էր «periscope»-ով, խօսեց Նոյեմբերի 1-ի ընտրութիւնների, հակամարտութեան կարգաւորման ապագայի եւ հայկական համայնքի խնդիրների մասին:

Կարօ Պայլանը, ով ոչ պաշտօնական տուեալների համաձայն լինելու է խորհրդարանում որպէս ԱԺԿ (Ազգերի ժողովրդավարական կուսակցութիւն) պատգամաւոր, «Ակօս»-ի «periscope»-ի հեռարձակման ժամանակ պատասխանեց Ակօս թերթի գլխաւոր խմբագիր Յդուարդ Տանձիկեանի հարցերին:

Կարօ Պայլանը, պատասխանելով այն հարցին, թէ ինքն ինչպէս արձագանքեց ընդհանուր ընտրութիւններում կուսակցութեան՝ մօտաւորապէս 1 մլն ձայն կորցնելու հանգամանքին, ասաց. «Մեր սպասածից քիչ ձայն ստացանք: 2014 թ. ՏԻՄ ընտրութիւններում 2 մլն 900 հազար ձայն էինք ստացել: Մէկ տարուայ ընթացքում կրկնապատկեցինք մեր կուսակցութեան ձայները: Սակայն կարգաւորման գործընթացի աւարտից յետոյ ամէն ինչ փոխուեց, բեւեռացումը խորացաւ: Այսպիսի իրավիճակներում հիմնական ընտրողը մնում է իր տեղում, նոր ընտրողները, իհարկէ, փոխւում են: Հակամարտութեան ընթացքում կոշտ ելոյթները մտահոգել են մարդկանց: Տեսնում ենք, որ այդ ընտրողները հեռացել են մեզանից»:

Կարօ Պայլանը, ով նաեւ անդրադարձաւ շրջանների իրավիճակին, նշեց՝ «Շրջանների բնակչութիւնն աւելի յոգնած է: Ամէն ինչ վերացաւ, երբ խաղաղութիւնն այդքան մօտ էր: Իշխանութիւնն իր ողջ միջոցները գործադրեց, որպէսզի ԱԶԿ-ի (Արդարութիւն եւ զարգացում կուսակցութիւն) ձայների թիւը մեծացնի: Միայն ԱԺԿն չի կարող խօսել խաղաղութեան մասին: Մենք էլ հէնց դա ենք ասում: Միւս կուսակցութիւններն էլ պէտք է լինեն, խաղաղութիւն ցանկացող ուրիշ դերակատարներ էլ են պէտք: Եկէք յոյս ունենանք, որ ԱԶԿ-ի՝ շրջանների ընտրուած պատգամաւորները ձգտելու են կարգաւորման»:

Կ. Պայլանը, յայտնելով կարգաւորման գործընթացի ապագայի մասին իր կարծիքը, ասաց. «ԱԶԿն այնպիսի մի կուսակցութիւն է, որ կարող է իր ընտրազանգուածին տանել ցանկացած ուղղութեամբ: Երբ երկու տարի առաջ «Թող մայրերը չարտասուեն» ասաց, ընտրազանգուածից ոչ մի դժգոհութիւն դուրս չեկաւ: Բանակցութիւնների սեղանը «շրջելու» ժամանակ էլ նոյնը եղաւ: Ցանկանում ենք, որ ԱԶԿ-ն իր ուժը նորից օգտագործի խաղաղութեան, խորհրդարանի համար: Մենք շարունակելու ենք ստիպել նրանց ժողովրդավարական քաղաքականութիւն վարել»:

Կ. Պայլանը նաեւ նշեց, թէ հայկական համայնքին առնչուող որ հարցերն է օրակարգ տանելու. «Մի շարք այլ հարցերի պէս, հայկական հարցն էլ է «սառեցուած» վիճակում: Այս շրջանում մեր առանցքային գաղափարը կառուցողական ընդդիմութիւնն է: Հիմնադրամի, պատրիարքի ընտրութիւնների, ստատուսի պէս հարցեր ունենք, եւ այս հարցերի շուրջ օրինագծեր ունեմ: Կապեր հաստատեցինք ընտրութիւններից առաջ, ընտրութիւններից յետոյ էլ սկսելու ենք աշխատել»:

## Միացեալ Նահանգներու Դեսպան

*Շարունակուած էջ 1-էն*

իր ներդրումներու միջոցով. եթէ անոնք նկատեն, որ կոռուպցիան կը կեղեքէ երկիրը, ապա կա՞մ ընդհանրապէս կը հրաժարին ներդրում կատարելէ, կա՞մ կրնան են ետ վերցնել իրենց ներդրումները», - ըսաւ Ռիչըրտ Միլզ:

Դեսպանը շեշտեց որ կոռուպցիան միայն տնտեսութեան վրայ չէ որ բացասաբար կ՚անդրադառնայ, այլ կը վնասէ ժողովրդավարութեան, իրաւունքի գերակայութեան եւ նոյնիսկ վտանգելով երկրի ազգային ապահովութեան:

Յայտարարելով, որ կոռուպցիայի դէմ պայքարի գծով Ամերիկայի դեսպանատունը պիտի շարունակէ աշխատիլ հայաստանեան բոլոր պետական ու հասարակական կառոյցներուն հետ, դեսպան Միլզ առանձնացուց կառավարութեան կից գործող Հակակոռուպցիոն Խորհուրդի դերը՝ շեշտելով թէ այդ մարմինին ցուցաբերուող աջակցութիւնը պայմանաւորուած է զգալի ձեռքբերումներով, որոնք պէտք է արձանագրուին, այլապէս աջակցութիւնը կը դադարի:

## ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆ ՈՒ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԸ

ARMENIAN AMERICAN MUSEUM

Կլենտէյլի մէջ կառուցուելիք Ամերիկահայութեան Թանգարանի հիմնումին նպատակով Քալիֆորնիոյ հայութեան ներկայացուցիչներուն հետ բանակցային բացառիկ համաձայնագիր մը կնքելու Կլենտէյլի քաղաքապետական խորհուրդի Նոյեմբեր 4, 2014ի որոշումէն ճիշդ տարի մը ետք, Թանգարանի վարչութիւնը բացայայտեց այդ ծրագիրին խորհրդանիշն ու համացանցային կայքը, Արեւմտեան Ամերիկայի Հայոց Ցեղասպանութեան 100 ամեակի ոգեկոչման միացեալ յանձնախումբի այս նախաձեռնութեան իրագեկութիւնը բարձրացնելու նպատակով:

Կլենտէյլ քաղաքի Սիվիք Օտիթորիըմին կից Ամերիկահայութեան Թանգարանի կառուցման համար տարուող աշխատանքները հասած են այն հանգրուանին, որ կրնանք անոր տրամադրուած յատուկ համացանցային կայք մը կազմել, ծրագիրին մանրամասնութիւնները հանրութեան ներկայացնելու նպատակով, կը յայտնէ Հիւսիսային Ամերիկայի Հայց. Առաքելական եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի առաջնորդ Յովնան արք. Տէրտէրեան, որ Ամերիկահայութեան Թանգարանի վարչութեան համատենապետն է:

Խորհրդանիշն ու համացանցային կայքը Թանգարանի ծրագիրի ծալքերը համայնքին ներկայացնելու գործիքներն են եւ առիթ պիտի հանդիսանան Ամերիկահայութեան Թանգարանին շուրջ հանրային խորհրդակցութիւն կատարելու, կը բացատրէ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Հայց. Առաքելական եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեան, որ եւս Ամերիկահայութեան Թանգարանի վարչութեան համատենապետն է:

Նշենք, որ Ամերիկահայութեան Թանգարանի վարչութիւնը կազմուեցաւ այս տարուան Օգոստոսին, Արեւմտեան Ամերիկայի Հայոց Ցեղասպանութեան 100 ամեակի ոգեկոչման միացեալ յանձնախումբին կողմէ, կառավարելու համար Թանգարանի կառուցման եւ պահպանման աշխատանքը: Ծրագիրին նպատակն է հաստատել Քալիֆորնիոյ հայութեան պատմութիւնը լուսարձակի տակ առնող բարձրորակ Թանգարան մը, որ միաժամանակ նախապաշարումներու դէմ պայքարելու կեդրոնի մը պիտի վերածուի:

Ամերիկահայութեան Թանգարանի վարչութեան մաս կը կազմեն շրջանի հայկական քաղաքացիական եւ կրօնական ինը կազմակերպութիւններ եւ հաստատութիւններ, որոնք են՝ Հիւսիսային Ամերիկայի Հայ Կաթողիկէ Առաջնորդարանը, Հայ Մշակութային Հիմնարկութիւնը, Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական միութիւնը, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանը, Հայ Օգնութեան Միութեան Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանը, «Նոր Օր» բարեգործական հիմնարկութիւնը, «Նոր Սերունդ» մշակութային միութիւնը, Հիւսիսային Ամերիկայի Հայց. Առաքելական եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանը եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Հայց. Առաքելական եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանը:

Թանգարանի խորհրդանիշը գեղարուեստական ներկայացում մըն է Արարատ լերան, դիտուած՝ Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան յուշարձանէն: Խորհրդանիշին մէջ Արարատ լերան զոյգ գագաթները կու գան կազմելու Թանգարանի անգլերէն անուան երեք բառերու առաջին գիրերը:

Թանգարանի համացանցային կայքը ծրագիրին տեսլականը ծանօթացնելու վայրը պիտի հանդիսանայ: Հոն տեղեկութիւններ պիտի դրուին Թանգարանի ցուցահանդէսներուն, իրականացուելիք ծրագիրներուն եւ վայրին մասին: Անիկա նաեւ միջոց մը պիտի ըլլայ

Շար.ը էջ 18

## ՍԻՐԱՆ ՍԵԶԱՅԻ ԶՈՅԳ ԳԻՐՔԵՐՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ






Թէքէեան Մշակութային Միութեան Լոս Անճելոսի մասնաճիւղը, գործակցութեամբ Պոլսահայ Միութեան եւ Հայ Կանանց Միջազգային Կազմակերպութեան, Հինգշաբթի Նոյեմբերի 5, 2015ին, գրական յիշարժան երեկոյ մը կազմակերպած էին Փասատինայի Պէշկէօթիւրեան Կեդրոնին մէջ: Սոյն հրապարակային ներկայացումին, շուրջ 200 հոգիներու ներկայութեամբ, ծանօթացուեցան սփիւռքահայ ծանօթ գրագիտուհի սիրան Սեզայի վերջերս լոյս ընծայուած զոյգ հատորներուն:

Հանդիսավար Նազիկ Գոճայեանի ողջոյնի խօսքէն ետք ելոյթ ունեցաւ Մարիա Քրիսեան: Ան ամփոփ կերպով ներկայացուց Վահագն Քիւփէլեանի կողմէ 2014ին հրատարակուած Սիրան Սեզայի «Գիրք Ծննդոց» յուշագրական վէպը: Արդարեւ մօտ 300 էջերէ բաղկացած այս հատորին մէջ հեղինակը ձեւով մը իր ինքնակենսագրութիւնն է որ կը ներկայացնէ, գեղարուեստական ինքնուրոյն ոճով:

Սիրան Սեզայի «Խորտակուած Կեանքեր» մեծածաւալ հատորը (642 էջ) հանգամանօրէն ներկայացուց Դոկտ. Մինաս Գոճայեան: 1924ին գրի առնուած այս աշխատութիւնը հարազատօրէն կը ցոլացնէ 1912էն 1918 թուականներուն արեւմտահայ մշակոյթի օրրան Պոլսոյ մէջ հասակ առնող նոր սերունդի ազգային, մտաւորական, կրթական, մշակութային, սիրային ու անձնական կեանքը, ցեղասպանութեան ու յետ պատերազմեան խորքին վրայ: Սիրան Սեզան 21 տարեկանին գրած այս վէպին մէջ ընդգծուած գոյներով կը ներկայացնէ շրջանի ընտանեկան աւանդութիւնները, իրենց դրական եւ բացասական ազդեցութիւններով նշեց Մ. Գոճայեան:

Սրտի խօսքերով հանդէս եկան Սիլվա Քաչիկեանն ու Ռոզալին Մատոյեանը: Անոնք բարձր գնահատեցին Սիրան Սեզան որպէս արժէքաւոր գրագիտուհի, որ իր լոյս ընծայած «Երիտասարդ Հայուհի» ամսաթերթով կրցաւ ջատագովն ու պաշտպանը հանդիսանալ հայ կնոջ արդար իրաւունքներուն: Սիրան Սեզա նաեւ քաջալերած է հայ իգական սեռի մուտքը գրական անդաստանէն ներս, որոնք յետագային դարձած են անուանի մտաւորականներ:

Երեկոյին ցուցադրուեցան նաեւ սահիկներ «պատկերներ պոլսահայ կեանքէն» անուան տակ, մեկնաբանութեամբ Անի Քիւփէլեանի: Գործադրուեցաւ նաեւ գեղարուեստական պատշաճ յայտագիր մը մասնակցութեամբ մայր եւ դուստր Քերքոնեաններու (տաւիղ եւ սրինգ):

Աւարտին խօսք առաւ Սիրան Սեզայի որդին եւ զոյգ հատորներու հրատարակիչը Վահագն Քիւփէլեան: Ան շնորհակալութիւն յայտնեց սոյն միջոցառումի մասնակիցներուն եւ կազմակերպիչներու: Երախտագիտական խօսք ուղղեց նաեւ իր մօրը Սեզային եւ յարեց «Այն ինչ որ եմ այսօր կը պարտիմ իմ մօրս»:

Դոկտ. Տէր Զաւէն Քհնյ. Արզումանեանի «Պահպանիչ» աղօթքով վերջ գտաւ սոյն երեկոն, որմէ ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ վերոյիշեալ հատորներէն ձրի տրուեցան հանդիսականներուն:

Bedros S. Maronian
818/500-9585
Siamanto B. Maronian
818/269-0909
SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs
6300 Wilshire Blvd. Suite 1900
Los Angeles, CA 90048
805 East Broadway
Glendale, CA 91205
300 N. Lake Ave. Suite 500
Pasadena, CA 91101
• Life Insurance
• Health Insurance
• Group & Individual
• Long Term Care
• Disability
• Estate Planning
• Will & Living Trust
• Full Annual Review
• Mortgage Protection
• College Planning
• Workman's Compensation
• Employee Benefits
• Annuity
• IRA
• 401K & 403B
A.B.A. INSURANCE SERVICES

New York Life · Anthem · BlueShield · Aetna · Health Net · CIGNA · Kaiser Permanente
Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits
Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ Է
Coverage & Protection should be on the top of your priority list.

# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ ԵՒ ԳՈՆԿՐԷՍԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԽԱՉՕ ԱՉԱՃԵԱՆ-Ի ՀԵՏ



ԱՆԻ ՄԱՐՍԷԼԵԱՆ

Հայազգի հասարակական գործիչ, Քալիֆորնիոյ Նահանգային Խորհրդարանի անդամ Խաչօ Աչաճեան իր թեկնածութիւնը ներկայացուցած է դառնալու համար Ամերիկայի Գոնկրէսի անդամ՝ Քալիֆորնիոյ 24-րդ ընտրաշրջանէն: Նահանգի կեդրոնական մասին մէջ գտնուող այս ընտրաշրջանը կ՚ընդգրկէ Սանթա Պարպարա, Սան Լուիս Օպիսպօ եւ Վենթուրա շրջանները:

Հայազգի թեկնածուն աւելի մօտէն ծանօթացնելու համար մեր ընթերցողներուն, հարցազրոյց մը ունեցանք Խաչօ Աչաճեանի հետ:

-Ըսուած է որ քաղաքականութեան հիմքը հետապնդուած նպատակն է: Ինչ մտադրութիւններով մուտք գործեցիք քաղաքական ասպարէզ: Ձեր կեանքին մէջ ինչու ան ունի մեծ նշանակութիւն:

–1982 Թուականին ես դարձայ Միացեալ Նահանգներու քաղաքացի եւ անկէ ետք որոշեցի համայնքներուն վերադարձնել այն ինչ որ պարգեւած էին ինծի: Ես սկսայ ուղեւորութիւնս որպես կառավարական գործիչ՝ այս նոյն նպատակով: Այն ժամանակ, երբ ես մուտք գործեցի քաղաքականութեան մէջ, կեդրոնացած էի իմ ընտանիքիս եւ համայնքին վրայ: Առիթը ներկայացաւ, երբ պաշտօնէ հեռացող վերահսկիչներ ու մի քանի համայնքային գործիչներ հաւաքագրեցին զիս՝ առաջադրուելու համար: Իմ կնոջ եւ ընտանիք համաձայնութեամբ ես թեկնածութիւնս դրի եւ յաղթեցի: Իմ նպատակը միշտ եղած է համայնքը առաջ մղել, այնպէս ինչպէս անոնք ըրին ինծի՝ իմ երիտասարդութեան օրերուն եւ այդ է որ փորձեցի ընել իմ պաշտօնավարման 17 տարիներու ընթացքին:

- Կրնաք որոշ տեղեկութիւններ տալ Ձեր քաղաքական ծրագիրներու մասին եւ բացատրել թէ ինչո՞ւ կ՚ուզէք Գոնկրէսի անդամ դառնալ:

–Իմ հիմնական նպատակը ստեղծել է աւելի փոքր եւ գործիմաց կառավարութիւն մը: Այդպիսով մարդիկ ազատութիւնը կ՚ունենան իրենց սեփական երազանքները իրականացնել: Ես կը փափաքիմ, որ մեր դաշնակցային կառավարութիւնը կեդրոնանայ ուժեղ տնտեսութիւն ստեղծելու վրայ, ապահովելով աշխատանքի պայմաններ, որպէսզի ամբողջ երկրի տարածքին մարդիկ կարողանան պահել իրենց ընտանիքը: Այս է հիմքը, որու վրայ կառուցուած է ամերիկեան «երազը»:

-Այս տարուայ Մարտ 18-ին խումբ մը դեմոկրատներ եւ հանրապետականներ առաջարկեցին Հայկական Ցեղասպանութեան Իրականութիւն եւ Արդարութիւն բանաձեւը: Ի՞նչու այդ բանաձեւը արդիւնքի չհասաւ:

–Որոշումը չանցաւ նոյն քաղաքական խաղերուն պատճառով, ինչ որ մենք Ուաշինկթընի մէջ տեսած ենք տարիներու ընթացքին: Անոնք դրժուած խոստումներն են մեր երկրի ղեկավարներուն կողմէ եւ Թրքական կառավարութեան կողմէ կատարուող թելադրանքները մեր կառավարութեան: Ես կը հաւատամ որ, այնուամենայնիւ, այդ քայլը ունէր օգտակար ազդեցութիւն: Մենք տեսանք, թէ որոնք են մեր իսկական դաշնակիցները:

-Ձեր կարծիքով Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը կրնա՞յ ազդել գոնկրէսի քուէարկութիւններուն վրայ:

–Կան արտաքին եւ ներքին քաղաքականութիւններ բոլոր քուէարկութիւններու պարագային: Մենք տեսանք թէ ինչպէս արտաքին ազդակներ անդադար կասեցուցին Հայկական Ցեղասպանութեան ճանաչումը դաշնակցային մակարդակի վրայ:

-Ձեր կարծիքով, հայութեան վրայ ինչ դրական ազդեցութիւն կրնայ ունենալ հայ ներկայացուցիչներու մուտքը թրքական խորհրդարանէն ներս:

–Թուրքիոյ կառավարութեան մէջ Հայերու ներկայացուցչութիւն ունենալը կարեւոր է: Տակաւին շատ հայեր կ՚ապրին Թուրքիոյ մէջ: Ինչպէս բոլոր կառավարութիւններու պարագային, իւրաքանչիւրը անհատ ձայն պիտի ունենայ ղեկավարութեան մէջ՝ զինք ներկայացնելու համար: Ես կը յուսամ որ, ասիկա կրնայ դառնալ առաջին քայլը՝ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ աւելի անկեղծ երկխօսութեան:

-Սփիւռքի պարագայի եւ յատկապէս այս երկրի մէջ, Հայ ինքնութեան պահպանումը գերխնդիր է: Ձեր կարծիքով ինչպէս կարելի է նոր սերունդը փրկել ձուլման վտանգէն:

–Ամերիկայի գեղեցկութիւնը հոն է, որ ան հալուող կուլան է: Ամերիկան անհաւատալիօրէն ընդունող տեղ է, ուր մշակոյթներու զանազանութիւնը ազգի ինքնութիւնն է: Հայերը Միացեալ Նահանգներու մէջ շատ բախտաւոր են, որ կրնան իրենց կրօնքին հետեւելու, հայկական դպրոցներ բանալու եւ հպարտօրէն հայկական մշակոյթին բաժնեկից դարձնելու իրենց դրացիները: Ես կը հաւատամ որ, անոնք իրենց լեզուն, սովորութիւնները եւ մշակոյթը փոխանցելու ազատութիւնը ունին իրենց ընտանիքներուն եւ ընկերներուն: Ես նաեւ կը խորհիմ որ, կարեւոր է, որ տարբեր տեղերէ եկած մարդիկ ծանօթանան Ամերիկայի մէջ ապրողներու կեանքին եւ պատմութեան: Յատկապէս, հայութեան պատմութիւնը շատ բան ունի սորվեցնելիք: Այս նպատակաւ ես դարձայ համահեղինակը օրէնսդրութեան մը, Քալիֆորնիոյ դպրոցներէն ներս Հայկական Ցեղասպանութիւնը դասաւանդելու ուղղութեամբ:

-Արդար եւ խելացի քաղաքականութիւն վարելու համար բաւարար չէ մարդիկ ճանչնալ այլ սիրել զանոնք, այսպէս ըսած է Քրաֆֆ: Դուք դարձաք իւրաքանչիւր հայու բանբերը՝ Ձեր գործունէութեամբ եւ ծառայութիւններով, միշտ դնելով Ձեր դրօշմը, զարգացնելու համար փոխյարաբերութիւնները Հայաստանի եւ սփիւռքի միջեւ: Ինչպէս կրնան ընթերցողները զօրակցիլ եւ օժանդակել ապագայ Ձեր ծրագիրներուն՝ Գոնկրէսի ընտրութիւններուն:

–Պատիւ է ինծի իմ գործունէութեամբ հայութիւնը ներկայացնել կառավարութենէն ներս: Օգտակար կարելի է ըլլալ, իմ ընտրապայքարին, բազմաթիւ միջոցներով: Ուրիշներու մօտ տարածել իմ մասին, կամաւոր աշխատանք տանիլ եւ նաեւ նիւթապէս նպաստելով: Դժուար ընտրապայքար մը պիտի ըլլայ եւ որեւէ օժանդակութիւն մեծապէս պիտի գնահատուի: Բոլոր անոնք, որոնք կը փափաքին միանալ մեր խումբին կրնան այցելել մեր կայքը՝ www.Katcho2016.com եւ սեղմել "Join."

-Անձնապէս ի՞նչ նշանակութիւն ունի այս պաշտօնը Ձեզի համար:

–Այս պաշտօնը աւելին է՝ ինչ որ կրնայի երազել օր մը համնիլ: Ուսում փնտռող գաղթականէ մը, պատիւը ունենալ դառնալու Միացեալ Նահանգներու Գոնկրէսի անդամ, դժուար պիտի ըլլայ ինծի համար բառերով բացատրել: Ամէն բանէ աւելի, ես կ՚ուզեմ օրինակ ծառայել մեր համայնքին, որ իսկապէս ամէն ինչի կարելի է համնիլ այս երկրին մէջ:

*Բայց պատմութեան այս փորձին մէջ կայ այլ վկայութիւն… Եւ եթէ այսօր արագ ակնարկ մը նետենք Հայաստանէն մինչեւ սփիւռքեան մէկն մի անկիւն, ուր հայը «յիշեց եւ պահանջեց», եւ ի*

*Շար.ը էջ 19*



# ՅՈՅՆ, ՀԱՅ ԵՒ ՌՈՒՍ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՅՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ՌՈՒՍԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Հոկտեմբերի 30- ից Նոյեմբերի 1- ը , Դեմոկրիտուսէ համալսարանը (Կոմոտինի, Յունաստան) կազմակերպել էր միջազգային գիտաժողով, ռուսական եւ հայկական ժողովրդագրութիւն. «Աւանդոյթ եւ արդիականացում»:



Գիտաժողովի մասնակիցները

Պրոֆեսոր Մանոլիս Սարգիսը եւ դոցենտ Լեֆտերիս Հարացիդիսը (յոյն , որը ծնուել եւ մեծացել է Հայաստանում) գիտաժողովի գիտական, իսկ Թեկնածու դոկտ. Ղարիֆալիա Թէոդորիդուն կազմակերպչական աշխատանքի պատասխանատուներն էին : Գիտաժողովի 36 մասնակիցների կողմից, ներկայացուեցին 34 փաստաթղթեր:

Գիտաժողովին արտասահմանից մասնակցում էին չորս հայ գիտնականներ՝ Հայաստանի Գիտութիւնների ազգային ակադեմիայի հնագիտութեան եւ ազգագրութեան անդամ, դոկտորներ՝ Լեւոն Աբրահամեանը, Գայեանէ Շագոյեանը եւ Աղասի Թադեւոսեանը ու նաեւ Ռուսաստանի գիտութիւնների ակադեմիայի ազգագրութեան ինստիտուտի անդամ դոկտոր Ալլա Տէր Սարգիսեանցը:

Իսկ Յունաստանից մասնակցում էին երկու հայեր՝ հին յունարէնի գիտական դասաւանդման դոկտոր՝ տիկին Խարա Կոսեղեանը եւ, Հայ-յունական հետազօտութիւնների կենտրոնի քարտուղար, գրող, պարոն Յովսէփ Քասեսեանը:

- Խարա Կոսեղեանը զեկուցել է, Նաֆպլիոում հայերի ներկայութեան եւ մասնագիտական զբաղմունքի մասին 1920-1960:

- Յովսէփ Քասեսեանը զեկուցել է՝ Յոյն ժողովրդական պարբերականներում հայ հերոսների տիտղոսների նմանութիւններն ու տարբերութիւնները 1920-1960»:

- Լեւոն Աբրահամեանը, ներկայացրել է՝ Յիշողութիւնն ու մոռացութիւնը յետխորհրդային քաղաքային տարածքի կառուցման գործում: Երեւանի պարագան:

- Վասիլիկի Մ. Նազարէթեանը զեկուցել է՝ «Հայկական աւանդական հագուստը. Տեղական տարազների ներկայացում. Պատմութիւն սոցեալական տարողութիւն»:

- Ալլա Տէր-Սարգսեանցը, զեկուցել է՝ «Հայկական բնակավայրերը Ռուսաստանում» թեմայի մասին:




Գիտաժողովի ծրագիրը

- Աղասի Թադեւոսեան ներկայացրել է «Իրաւունքն ու առօրեայ կեանքը յետխորհրդային Երեւանում»:

- Գայեանէ Շագոյեանը զեկուցել է՝ «Երկրորդ քաղաքը, որպէս առաջին քաղաք. Գիւմրիի զարգացումը մարդաբանական տեսանկիւնից»:

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ԽԱՉՔԱՐԻ ԶԵՏԵՂՈՒՄ ՊՔԵՐՔԷԻ ՄԷՋ



Անտիոքի եւ համայն արեւելքի Մարոնի եկեղեցւոյ Պշարա Ռայի պատրիարքի հովանաւորութեամբ Հինգշաբթի, 5 Նոյեմբեր 2015-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած հայկական խաչքարի բացման արարողութիւն եւ համաքրիստոնէական հաւաք՝ մասնակցութեամբ քրիստոնեայ համայնքներու պետերուն եւ ներկայացուցիչներուն, Մարոնի եկեղեցւոյ պատրիարքութեան շրջափակին մէջ, Պքերքէ:

Ձեռնարկին ներկայ էին կարտինալ Պշարա Ռային, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը, պապական նուիրակը, պետական եւ զինուորական ներկայացուցիչներ, հոգեւոր պետեր, կուսակցութիւններու ներկայացուցիչներ, լիբանանցի եւ հայ մտաւորականութիւն եւ հոծ բազմութիւն մը: Ձեռնարկին բացման խօսքը կատարեց Ֆլի Ահուաշ: Ան ողջունեց ներկաները այս պատմական եւ մարդկային մեծ իրադարձութեան առիթով եւ ըսաւ. «Բոլորս կը կառչինք խաչին եւ կը յիշենք, թէ ինչպէ՛ս ժայռերուն դէմ մաքառելով քրիստոնեաները ունեցած են լոյս եւ ջուր, կապուած են իրարու, դիմադրած են չարին Պէյրութի ծովափերուն՝ հաւատալով, որ եթէ Աստուած մեզի հետ է, ոչ ոք կրնայ մեզի յաղթել»:

Ելոյթ ունեցաւ Ժիւլի Խէյր Ալլա-Պուտագեան: Ան արժեւորելով հայ-լիբանանեան եղբայրական յարաբերութիւնները մատնանշեց, թէ ինչպէ՛ս հայերը ջարդէն փրկուելով հիւրընկալուած են Լիբանանի մէջ, ապա տքնաջան աշխատանքով մեծ դեր ունեցած են Լիբանանի բարգաւաճման ու զարգացման գործին մէջ: Ան յայտնեց, որ բարերար Սարգիս Պուտագեանի փափաքը եղած է այս կոթողը զետեղել պատրիարքութեան շրջափակին մէջ՝ իբրեւ շնորհակալութեան երաշխիք լիբանանցի ժողովուրդին: Ան աւարտեց խօսքը ըսելով. «Այս սուրբ երեկոյթը լաւագոյն վկան է խաղաղ եւ սիրոյ համակեցութեան Լիբանանի ժողովուրդին. խաչքարը վկայութիւնն է հաւատքի տոկունութեան եւ ինքնին ականատես վկան է յարութեան»:

Խօսք առաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը: Ան ըսաւ. «Խաչքարը կը խորհրդանշէ հայութիւնը, կ'արտացոլացնէ հայու կամքը եւ յաղթանակը»: Ան բարձր գնահատեց խաչքարի զետեղումը այս պատմական վայրին մէջ եւ շնորհակալութիւն յայտնեց մարոնի եկեղեցւոյ պատրիարքութեան՝ այս աննախընթաց իրադարձութեան համար:

Ելոյթ ունեցաւ նաեւ Անտիոքի մարոնի եկեղեցւոյ պետ Պշարա Ռայի պատրիարքը: Ան ըսաւ. «Խաչքարը կը դրսեւորուի երեք ծիրերու մէջ՝ հաւատքի, եկեղեցա-

Շար.ը էջ 19

# ՔԱՐՎԱՃԱՌ ՇՐՋԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ «ԽԱՉԵՆ» ՄԱՐԶԱԴՊՐՈՑԸ



Ողջոյն սիրելի հայրենակից:

Ես Թամարա Գրիգորեանն եմ, գրում եմ Արցախ աշխարհի չքնաղ մի անկիւնից, Քարւաճառից: Արդէն երրորդ տարին է՝ ամուսնուս հետ մշտապէս ապրում ենք Քարւաճառում: Բացի տեղում եր եխաների հետ աշխատելը, կարեւոր եմ համարում նաեւ Քարւաճառի մասին աշխարհին պատմել, մեր հայրենակիցներին, ովքեր հեռու են Արցախից, ներկայացնել մեր ազատագրուած հայրենիքի այս հատուածի ուրախութիւններն ու խնդիրները, ձեռքբերումներն ու առօրեան, այստեղ ապրող մարդկանց, նրանց ակնկալիքները, ամենօրեայ մտահոգութիւններն ու յաջողութիւնները:

Անչափ ուրախ եմ, որ այսուհետ հնարաւորութիւն եմ ունենալու Քարւաճառի մասին պատմել ԱՄՆ ? ում ապրող մեր հայրենակիցներին եւս, եւ դրա համար շնորհակալ եմ »Արարատ« հիմնադրամին, որ ինձ ընձեռում է այս հնարաւորութիւնը: Իմ նիւթերի միջոցով կը փորձեմ ձեզ համար ծանօթ, ճանաչելի ու հարազատ դարձնել Քարւաճառը, մեր բոլորի չքնաղ հայրենիքը: Ուրախ կը լինեմ նաեւ պատասխանել Քարւաճառի մասին ձեզ յուզող հարցերին:

Առաջին նիւթը, որ ներկայացնում եմ ձեր ուշադրութեանը, Քարւաճառի մարզադպրոցի մասին է:



Շահումեանի շրջանի Քարվաճառ շրջկենտրոնում գործող «Խաչէն» մարզադպրոցն այս ուսումնական տարում ունի 106 սան: Մարզադպրոցի խմբակներ գործում են ինչպէս շրջկենտրոն Քարվաճառում, այնպէս էլ՝ շրջանի գիւղական համայնքներում:

Քարվաճառում գործում են սեղանի թենիսի, թեթեւ ատլետիկայի, ֆուտբոլի, ազատ ոճի ըմբշամարտի խմբակներ: Ակնաբերդ համայնքում գործում է սեղանի թենիսի եւ տղաների վոլեյբոլի խմբակ, Եղեգնուտում՝ ձիւդոյի խմբակ, Նոր Բրաջուր համայնքում՝ թեթեւ ատլետիկայի խմբակ, Նոր Վերինշէն համայնքում՝ աղջիկների վոլեբոլի խմբակ: Այս մասին մեզ հետ զրոյցում տեղեկացրեց մարզադպրոցի մեթոդիստ Էլլադա Աղասեանը: Այս տարի առաջին անգամ Ակնաբերդ համայնքում անցկացւում են պասքետպոլի պարապունքներ:

«Քանի որ այս համայնքում դահլիճ կայ, այս ուսումնական տարուանից այստեղ նաեւ պասքետպոլի պարապունքներ են անցկացւում», ընդգծեց մեթոդիստը:

Նոր ուսումնական տարուայ սկզբից, Սեպտեմբեր ամսից, մարզադպրոցի մասնակցութեամբ հանրապետական միջոցառումներ

Շար.ը էջ 19

# ԱՇՆԱՆ ՀԵՔԻԱԹ

**ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ**

*Աշուն...: Մեղմում են Միհր արեւ աստուծոյ հրաշունչ ատրուշանի կրակի բոցերը, երկիր մոլորակի հիւսիսային կողմն աշխարհի երեսն են գգւում ծովերի մեղմանուշ հովիկները: Արարատի գագաթից յառնած Արմին-Հայերի արեւ աստուած Միհրը լոյսի անուշ ժպիտ է հոսում «Սրբազան Օրինաց Երկիր» արմին-հայերի լեռնաշխարհին: Առաւօտեան «Արեգակն արդար»-ը լոյս է փռում նրա լանջերին, համբոյր շաղում դաշտերին իջած ցօղի մարգարիտեայ հատիկներին, որոնք նրա գգուանքից հողին են ընկնում: Միհր աստուծոյ լոյս, բնութեան ու կեանքի յաւերժութիւնն է այն, որի մի շիւղը յաւիտեանն արժի, տիեզերական արարչութեան պարգեւն է այն մեր մոլորակին: Արմին-հայերն են միայն իրենց Միհր արեւ աստուծոյ լոյսով ողջունում են աշխարհի մարդկանց: «Բարի Լոյս», «Բարեւ» մաղթանքներով, նրա ժպիտը ցանում նրանց սրտերին, որ բարութեան արարում լինէր այնտեղ...:*

*Աշուն...: Արմին-Հայ, հասել ես այս հեռու երկրի չէներ, ինչպէս ես աշունը դիմաւորում: Արի գնանք քու Արմինա-Հայաստան աշխարհի աշնանային այգիներ: Ծիածանի հրդեհ է վառւում այնտեղ, եօթը գոյների լոյսի հեղեղ է հոսում այնտեղ, որի թովչանքից հոգիդ պիտի գմայլի բնութեան սքանչանքով, լցուի խինդով: Փառաբանենք Միհր արեւ աստուծոյն, որ իր կենսուժն է յորդել Հայոց աշխարհի այգիներին, փառաբանենք Արմին-Հայ նախնիների հողի մշակներին, որոնք ծառ են պաշտել, որպէս խաչեր իրենց նախնիներին ծառ են հողի սրտին տուել: Կանթեղներ են նրանց սաղարթներին, ծիածան գօտիներ լանջերին, ոսկի ապարաջաններով զարդարուն թեւերը վեր պարզած աղօթում են արեւին: Կարմիր այտերով շիկնած խնձորը, սաթեայ տանձը, կարմրաթուշ դեղձը հովիկների համբոյրից հորովէլներ են շշնջում: Յաւերժութեան խորհրդանիշ նռնենիների թեւերից նռներն են ճօճւում որպէս հրազունդեր: Հրաբխացել են նռները, նրանց սրտերից կարմիր կայծեր են ժայթքում: Արմին-հայերի նախնիները նռնենիներ էին տնկել աստուածների մեհեանների շուրջ, նորահարսերը նռներ էին զարկել իրենց օճախների շեմերին, որ միշտ լոյս լինէր այնտեղ:*

*Աշուն...: Արի գնանք խաղողի այգիներ, մայրացած որթատունկերն են կրթնել յենասիւների լարերին: Ոստերի տերեւների արանքներից արեւից շիկնած խաղողն է ժպտում: Աշուն, խաղողն է հասուն, լոյսով լեցուն հատիկները կարծես ահա կը պայթեն, դէմքդ կը ցօղեն անուշ բոյրով, շրթներդ քաղցր համով, հայրենի երկրի՝ «Արեւահամ բարն» է այն: Խաղող քաղի՛ր, մի վախենար, նրա կարմիր կրակը չի այրի մատներդ, հրճուի՛ր նրա լոյսի հրեղէն ցոլքով: Ճաշակի՛ր այն, Անահիտ աստուածուհու պարգեւն է, Արմինա-Հայաստան աշխարհի արեւի համը, լուսնեակի անուշ դէմքի շաղոտ լոյսը, հայրենի հողի բոյրը, աստղամերձ լեռների ընդերքից ժայթքած ջրերն են այնտեղ: Հնձաններում քամում են նրա հիւթը, լցնում կարասներ, նրա սրտի կրակն է պռթկում, դուրս ժայթքում, պղտորւում... ուժասպառ հանդչում: Աստուածների ըմպելիք գինի է այն, որը խորաններին առաջ խոնարհած նորապսակների շուրթերին սէր է հոսում, բանաստեղծներին տիեզերական թռիչք շնորհում, բանաստեղծութիւն արարում: Արբեցի՛ր քու Արմինա-Հայաստան աշխարհին իջած աշնան հեքիաթով, խաչուած քու միլիոնաւոր նախնիներին դու էլ ծառեր տնկիր: Դեռեւս մանչ, ծառեր եմ տնկել Մուսա Լեռան իմ հայրենի լեռների լանջերի դարաւանդներին, ծառեր ու որթատունկեր տնկել մայր ոստանի տանս այգում, այս երկրի հողում ծիրանենի, թզենի, խնձորենի, նարնջենի, նորաշխարհենի ծառեր եմ տնկել, որոնց հպելով հայրենի կարօտի սարսուռով եմ այրւում: Գնացի մայր ոստան, թշուառական դրացիներից օտարուած այգումս՝ հայկական լեգէոնի զինուոր, «Կապորալ» Արմենակ հօրս տնկած խաղողի որթատունկերը, ծառերը համբուրեցի:*

*Աշուն...: Արմին-Հայ, Զանգեզուրի «սիգապանծ» լեռների լանջերին աշնան հրդեհ է բռնկւում, արի գնանք նրա լոյսը լցնենք մեր սրտերին: Մի՛ վախենար, շանթերի հրդեհ չէ, ծառերի սաղարթների ամառային արեւի ամբարած կրակն է: Լեռների լանջերից կարմիր հեղեղ է հոսում անդնդախոր ձորեր, անտառների հեքիաթային հրաշախաղ է այն: Ծառերի յոգնատանջ տերեւներն են շշուկով ընկնում հողին, անտառի երգն է, ունկնդրիր այն, տես ինչքա՜ն անդորր պիտի իջնի հոգուդ: Աշնանը այդ անտառներում որսի ենք ելել, մեր հրացանների արձակած փամփուշտները անզօր էին եղել հասնելու քարափներին բազմած «կղթար»-ներին հասնելու: Հեռուից պիտի նշմարես խնձորենի, տանձենի, սալորենի, հոնի, գկեռի արեւոտ ծառեր, ասում են վայրի, ո՜չ, մայր բնութիւնն է արարել այն, մարդիկ են նրանց շիւերը տարել, տնկել հողին, ազնուացրել: Մօտեցի՛ր ծառերին, նրա սաղարթներից ժպտացող պտուղներն են հասուն: Երբ հովիկները նրանց այցի էին գալիս՝ օրօրւում են բերքից ճիւղակտուր եղած ոստերը, դու էլ ձեռքերդ վեր պարզած աղօթիր մայր բնութեան արարչութեանը: Առաւօտեան ցօղն նրանց երեսներին՝ տանձ, խնձոր, սալոր քաղիր: Մտիր անտառի ձորակներ, հոնենիներ են այնտեղ, կայծեր են կախ ընկած նրանց վարսերից, հոնն է այն, այդքան կարմիր կրակ ո՞րտեղից:*

*Արմին-Հայ, բացի քու մայր ոստանում այդ ո՞րտեղ են աշնան հեքիաթի տօնախմբութիւն կատարում, որը մկրտել են՝ «Ոսկէ Աշուն» մակդիրով: Հոկտեմբերի երկրորդ Կիրակի օրը, ոստանի հազար-հազար հայեր իրենց մանչերի հետ գնում էին «Հրազդան Մարզադաշտ», աշնան հեքիաթի տօնահանդէսին մասնակցելու: Աղմկում էր, երգում էր մարզադաշտը, խինդի հրավառութիւն էր պայթել այնտեղ: Այդ տօնախմբութիւնը իրենց հեթանոս նախնիների բնութեան պաշտամունքի, այգիներում ու արտերում հասունացած բերքի, Արածանի գետի ափի Նաւասարդի յուշերն էին:*

*Աշնանային արեւի թեւերին բազմած ճախրեցի Արմինա-Հայաստանի մայր ոստան, խուռներամ Արմին-հայերի հետ գնացի «Հրազդան» մարզադաշտ՝ մասնակցելու բնութեան պաշտամունքի ու Նաւասարդի աշնան տօնահանդէսին: Մարզադաշտի վազքուղուց բաց ձիակառքն էր անցնում, այնտեղ էր բազմած աշնանային երփներանգ շրջազգեստով աշունը խորհրդանշող Արմինուհին: Պայթում էր խինդը մարզադաշտի շարքերին բազմած հազար-հազար Արմին-հայերի, օրօրւում էր մարզադաշտը, ալիքւում էր որպէս ծիածան հագած ծովակ:*

*Մարզադաշտի խոտածածկի վրայ պատուանդան է, այնտեղ էին բազմել երգիչներ՝ Օֆելեան, Վարդուհին, Լուսիկը, Ռուբէնը, Յովհաննէսը եւ բազում այլ երգիչներ: Հայոց ժողովրդական երգերի հրավառութիւն էր, որոնց հնչիւնները հոսելով Հրազդան գետի ջրերին, գնում էին Մայր Արաքսի ջրերին համբոյր շաղելու, որ նա էլ հրճուէր, ոչ թէ «քայլամոլոր» գնար, այլ խինդից զարկէր ափերին, փրփրակէզ ժպտար: Գուսաններ՝ Հաւասի, Շահէն, Աշոտ իրենց նախնիների Գողթան գաւառի, Արարատի լանջերի ոգուց երկնած հայրենիքի սիրոյ գովքի երգերն էին հնչում: Մարզադաշտի գորգի վրայ տղաների ու աղջիկների պարախմբեր էին: Իրենց նախնիների չէների պարերն էին, ելեւէջում էին նրանց շարքերը, յաջորդաբար ցած էին հոսում պարմանուհիներ, կարծես ծառերից ընկած աշնան հազար գոյների տերեւներ լինէին, որոտագին ծափահարում էր մարզադաշտը: Սեւանայ ծովակի ջրերի լոյսն էր աշտարակների վրայից հոսում մարզադաշտին, դեռ երկար պիտի ցնծային: Թմբուկ էին զարկում, ծիրանափողեր էին հնչում, տղաների ու աղջիկների պարերի խառը խմբերի աղջիկներ, տղաներ ձեռքերը ճախրած աստղերին՝ դոփում էին գետինը, թող աշխարհի սարքերը գրանցէին հայոց աշխարհից պայթած ցնծութիւնը, նրանց լինելիութեան յաւերժութեան լոյսը: Աշնան, ու Նաւասարդի հեքիաթի ցնծութեամբ էին արբեցել Արմին-հայերի սրտերը, լոյսի հեղեղ էր մայր ոստանում:*

*Աշուն...: Հայոց աշխարհի այգիների, արտերի հասունացած բերքն են ամբարում: Այգեկութ է, խաղողն են տանում գինու գործարաններ, որ այն գինի դառնար, այն թորէին ու լցնէին Զանգեզուրի անտառների կաղնու տակառներում, որ հանգչէր եւ Նայիրեան ու իրենց նախնիների ոստանների անունները իրենց ճակատներին՝ աշխարհներ գնար, հարսանեկան խնճոյքներին խրախճանք բոցավառէր: Արարատեան դաշտի չէներում, մայրուղիներում՝ հազար-հազար գոյնի մրգերով ու բարիքներով արեւացած սեղաններ էին բացուել: Աշնան բերքի ու Նաւասարդի տօն էր, այնտեղ էր Արմինա-Հայաստանի նախագահը, շինականների հետ չհասունացած աշնանային գինի էր ըմպում, նրանց խոնջանքն էր փառաբանում:*

*Աշուն...: Հոկտեմբերի երկրորդ տասնօրեակին, Արմին-հայերը իրենց մայր ոստանի, Արին-Բերդի բլուրի ստորոտի հրապարակում, Երեւան դարձած «Էրէբունի» քաղաքի ծնունդն էին տօնախմբում: Ամբողջ Ոստանն էր այնտեղ խմբուել, թմբուկների զարկերի, ծիրանափողերի հնչիւնների ուղեկցութեամբ բերդի գագաթի 2750 աստիճաններից, առաւօտեան արեգակը ափի վրայ պահած, Արմինա-Հայաստանի Արգիշտի-Արմախս արքան էր իջնում: Արմին-հայերի ողջոյնի բացականչութիւնները երկինքն էին պատռում, հասնում «Խալդի» աստուծոյ Մուսասիր-Մուշ կամարակապ-սիւնազարդ տաճար: Աշխարհում առաջին կամարակապ-սիւնազարդ շինութիւնների վկան էր այն: Արքան աւետում էր՝*

«Մեծութեամբ Խալդի աստուծոյ,
Արգիշտին, Մենուայի որդին, ասում է,
Իրբունի բաղաքը ես կառուցեցի
Հզօրութեան համար Բիաինա երկրի,
Եւ զսպան համար թշնամի երկրների:
Հողը ամայի էր, ոչինչ չկար կառուցուած այդտեղ:
Հզօր գործեր ես այդտեղ կատարեցի,
6600 զինուորներ Խաթէ եւ Ծուպանի
Երկրներից ես այդտեղ բնակեցրի»:

*Ոստանի քաղաքապետն էր նրան ընդ առաջ գալիս, հրաւիրում գահին բազմելու: Արքայի պատուին «Էրէբունի-Երեւան» երգն էր հնչում: Հրապարակն էր բացւում, Սասնա քաջերի, «Քոչարի», «Բերդ Պար», ժողովրդային երգեր, որոնց հնչիւնները փերիների թեւերին բազմած հասնում Տուշպա-Վան, տօնական ողջոյն տանելու Արմինայի «Արա-Արաեան» տոհմի արքաներին: Հայոց մայր ոստանի ծնունդն է՝ 2797 տարեկան է այն, աւելի կանուխ հիմնադրուած քան Աթէնքն ու Հռոմը: Արգիշտին ինչո՞ւ էր Բիաինա (բիա- կրակ իմաստով) երկրի եւ ոչ թէ Ուրարտու երկրի արքայ էր իրեն անուանել:*

*Իսկ ո՞վ էր Արգիշտի արքան: Ասորեստանի արձանագրութիւններում, իրենց լեզուի սեպագիր գրերով Բիաինա-ի արքային Արգիշտի էին անուանել: Այն բաղկացած է՝ «Ար», «Գիշ» «Տի» մասերից: «Ար»-ը՝ Արմինայի Արա կրակ-արեւ աստուած Արան է, «Գիշ»-ը Շումեր-Սումերների սեմական լեզուով նշանակել է՝ «ծնել, սերել, ծնունդ, սերունդ»: «Արգիշ» նշանակում է՝ արածին, կրակ-արեւի աստուած «Ար-Արա»-ից սերուած, «Ար-Արա»-ի ծնունդ-սերունդ»: «Տի» բաղադրիչը «կենդանի-ապրող» իմաստ ունի: Շումեր-Սումերերէն սեմական լեզուով «Գիշ» եւ «Մա» բառերը նոյն իմաստով հոմանիշ բառեր են: «Արգիշտի» անունը, վերոյիշեալ ստուգաբանութեամբ հնչում է «Արմախս»: Պատմիչ Թովմա Արծրունին իր «Արծրունեաց Տան Պատմութիւն» երկում յիշատակել է հայոց Արմախս թագաւորին, որը գահակալել էր Ասորեստանի Նինոս թագաւորի ու նրա կնոջ՝ Շամիրամի գահակալութեան ատեն, կառուցել Արմաւիր քաղաքը: Ք.ա. 780-ական թուերին գահակալել էր նաեւ Արգիշտին, արմինների Արատտա պետութեան ոստան Մեծամորի մօտ կառուցել էր Ար-գիշտի-խինլի քաղաքը: Պատմահայր՝ Մովսէս Խորենացին իր մատեանում հաւաստել է, որ հայոց Արմայիս արքան էլ նոյն վայրում կառուցել է Արմաւիր քաղաքը եւ իր որդի Արաստի անունով Երասխ է անուանել Արաքս գետը: «Արգիշտի-Արգիշտիխինլի-Արմաւիր» քաղաքի անունների ու կառուցման վայրի նոյնութիւնը նաեւ հաստա-*

*Շար.ը էջ 19*

## ՄԱՐԴՈՒ ԳՈՒՆԱՅԻՆ ՆԵՐԱՇԽԱՐՀԸ

*Հնագոյն ժամանակներէն մարդիկ կը հաւատային, որ գոյնը ունի կախարդական ուժ:*

*Գիտնականները կատարած են բազմաթիւ հետազօտութիւններ, որոնք հաստատած են այն փաստը, որ գոյնը կ՚ազդէ մարդու տրամադրութեան, զգացումներուն, միտքերուն եւ նոյն իսկ առողջութեան վրայ: Իւրաքանչիւր գոյն մարդու ուղեղին մէջ կը յառաջացնէ իւրայատուկ գրգիռ:*

*Այսպիսով՝ կապոյտ գոյնը մարդու մօտ կը յառաջացնէ հանգստութեան եւ բաւարարուածութեան զգացում, մուգ կապոյտը՝ անվտանգութեան զգացում: Բաւական է բարկացած մարդը մտնէ մուգ վարդագոյն պաստառներով սենեակ, որպէսզի մէկ անգամէն հանգստանայ եւ նոյնիսկ ննջէ: Մուգ վարդագոյնը նաեւ կը հանգստացնէ մկանները: Ասկէ կարելի է եզրակացնել, որ գոյնը կ՚ազդէ ոչ միայն մարդու տրամադրութեան, այլ ընդհանրապէս մարդու մարմնին վրայ:*

*Գոյնի օգնութեամբ կարելի է ոչ միայն կանխել հիւանդութեան զարգացումը, այլեւ բուժել արդէն հիւանդ մարդը: Գունային բուժումը կ՚օգտագործէին հին Եգիպտոսի մէջ, սակայն դարերու ընթացքին այդ մասին գիտելիքները անհետացան:*

*Այդ երեւոյթին հանդէպ բարձրացաւ հետաքրքրութեան նոր ալիք, երբ 1878 թ. հետազօտող - գիտնական Էտուին Պեպլիթ լոյս ընծայեց «Գոյնի բուժիչ ուժը» աշխատանքը, որ յաջողութիւն ունեցաւ եւ բժշկական շրջանակներու մէջ մեծ աղմուկ բարձրացուց: Հիմնուելով երկարատեւ հետազօտութիւններու արդիւնքներուն վրայ՝ գիտնականը շարադրեց լուսային եւ գունային բուժման հիմերը: «Գոյնը չունի անմիջական բուժիչ ազդեցութիւն, այլ, աւելի շուտ, հոգեբուժութեան տեսակներէն մէկն է»,- կը նշէ Պեպլիթ:*

*Ան գունային ազդեցութիւնը կը բաժնէ երկու ուղղութիւններու՝ «կարմիր» եւ «կապոյտ»: Անոր կարծիքով՝ այդ հիմնական գոյները կ՚ազդեն ջղային համակարգի աշխատանքին վրայ, իսկ դեղնականաչաւուն յարաբերակցումը ան համարեց չէզոք:*

*Կարմիրի երանգները կը զօրացնեն երակներու եւ մկաններու կենսունակութիւնը, կը նպաստեն արեան ճնշման բարձրացման, կ՚արագացնեն սրտի աշխատանքը, կը բարելաւեն նիւթափոխանակութեան եւ սպիացման գործընթացները: Կարմիրը կրնայ յառաջացնել փսխում, յաճախամիզութիւն, լեղազատում, ունենալ տաքցնող ազդեցութիւն: Կարմիրի երանգները կարելի է օգտագործել ջղային համակարգի խթանման համար: Անոնց ազդեցութիւնը նաեւ կրնայ արագացնել սակաւարիւնութեամբ տառապող հիւանդներու կազդուրման գործընթացը, ինչպէս նաեւ՝ օգնել երկարատեւ հիւանդութենէ ետք վերականգնելու ուժերը:*

*Տաք գոյները վնասակար են սուր բորբոքային գործընթացներ, փորհարութեան, անքնութեան եւ ջղային համակարգի գրգռուածութեան ժամանակ: Կապոյտի պաղ երանգները կը նպաստեն արեան ճնշման իջնելուն, կը դանդաղեցնեն զարկերակը, կը վերացնեն բորբոքային գործընթացները: Անոնք կը նպաստեն ջերմութիւնը իջեցնելուն, կը հանգստացնեն ջիղերը, կ՚արագացնեն ոսկրային հիւսկէնի վերականգնումը: Միեւնոյն ժամանակ՝ այդ գոյները հակացուցուած են կաթուածներու, լեղուղիներու եւ երիկամունքներու մէջ քարերու գոյացման, այտուցներու, ոչ արագ ընթացող քրոնիկ հիւանդութիւններու եւ հիփոթենզիայի ժամանակ:*

*Ըստ գիտնականին՝ մարմնի իւրաքանչիւր մաս «ունի» իր համապատասխան գոյնը: Այսպէս. գլխուն կը համապատասխանեն պաղ գոյները՝ մանիշակագոյնը, կապոյտը եւ երկնագոյնը: Սրտին, թոքերուն, դիմադրողական եւ արիւնատար համակարգերուն՝ կանաչը, իսկ աղիքներուն, ենթաստամոքսային գեղձին, լեարդին եւ ստամոքսին՝ դեղինը կամ դեղնականաչը: Միզապարկին եւ հաստ աղիքին կը համապատասխանէ նարնջագոյնը:*

## ԵՐՋԱՆԻԿ ԸՆՏԱՆԻՔ ԵՒ ՅԱՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ 7 ԳԱՂՏՆԻՔ

*1. Այսպիսի կինը միշտ երջանիկ եւ ուրախ է. ե՛ւ երջանիկ ընտանիք, ե՛ւ յաջող աշխատանք ստեղծելու փափաք ունեցող կնոջ կեանքին մէջ տեղ չունին հիասթափութիւնն ու ափսոսանքը: Ոչ մէկը եւ ոչինչ կրնայ ետ պահել զինք իր կայացուցած որոշումէն:*

*2. Ան գիտէ, որ աշխարհի մէջ գոյութիւն ունի փոխհատուցման օրէնք. Օրինակ՝ եթէ ան կ՚ուզէ նուէրներ եւ հաճելի անակնկալներ ստանալ իր ամուսինէն, ուրեմն ատիկա պէտք է փոխադարձ ըլլայ: Մենք սովորաբար կը ստանանք այն, ինչ կու տանք:*

*3. Նման կիները գիտեն, որ իրենց բնաւորութեան բոլոր գիծերը՝ ե՛ւ դրական, ե՛ւ ժխտական, օգտակար են իրենց համար: Այսպիսի կիները շատ լաւ կը գիտակցին, որ անթերի մարդիկ չեն ըլլար եւ անհնար է պայքարիլ բնաւորութեան բոլոր ժխտական գիծերուն դէմ:*

*4. Նման կիները երբեք չեն յոգնիր. Այսպիսի կիները ուժի, ջիղերու, միտքերու մեծ պաշար ունին: Անոնց համար հանգստանալը այլ գործ մը ընելն է: Անոնց ուժերը կը մարին միայն գիշերը: Իսկ օրուան ընթացքին անոնք նոյնիսկ ժամանակ կը գտնեն առանձին մնալու իրենք իրենց հետ:*

*5. Անոնք երբեք չեն քննադատեր: Այսպիսի կիները շատ լաւ կը գիտակցին, որ պէտք չէ քննադատեն ու նուաստացնեն միւսները: Անոնք միշտ կ՚ընեն այն, ինչ կ՚ուզեն՝ անկախ միւսներուն կարծիքէն: Եւ երբ կը զգան, որ ուժերը արդէն կը սպառին, 15 վայրկեան կ՚աղօթեն, ուժով կը լիցքաւորուին եւ կը շարունակեն իրենց գործունէութիւնը:*

*6. Անոնք կը հասկնան, որ ոչ մէկը կրնան վերադաստիարակել: վերադաստիարակել կը նշանակէ ուէէ մէկուն ստիպել մտածել ու գործել այնպէս, ինչպէս դուք կ՚ուզէք: Սակայն երջանիկ ընտանիք եւ յաջող աշխատանք ստեղծելու ցանկութիւն ունեցող կիները կը հասկնան, որ ոչ մէկը կրնայ վերադաստիարակել եւ ատիկա ուժերու եւ ժամանակի անտեղի կորուստ է:*

*7. Անոնք ոչ մէկ բանէ կախեալութիւն ունին. Այս կիները միշտ կը յիշեն, որ կեանքը մէկ վայրկեանի մէջ կրնայ փոխուիլ: Ուստի, անոնք կ՚առաջնորդուին միշտ բոլորին եւ ամէն ինչին երախտագիտութեամբ հրաժեշտ տալու սկզբունքով: Այս կիները կրնան անկեղծօրէն գնահատել իրենց յարաբերութիւնները եւ սթափ դիտարկել զանոնք:*

## ՍՆՆԴԱԿԱՆՈՆՆԵՐՈՒ ԺԽՏԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ ՁԵՐ ՈՒՂԵՂԻՆ ՎՐԱՅ

*Սննդականոնի հետեւիլը դարձած է նորաձեւութիւն: Մարդիկ կ՚այցելեն սննդականոնի մասնագէտներու, կը հետեւին խիստ ցուցմունքներու բարեձեւ մարմին ունենալու համար: Երբեմն այդ սննդականոնները կրնան ժխտական հետեւանքներ ունենալ մեր ուղեղի գործունէութեան վրայ: Ուղեղին նախասիրած ուտելիքներն են իւղով հարուստ, քիչ ածխաջրածին-carbohydrate պարունակողները: Ածխաջրածին պարունակող ուտելիքները՝ գոց գոյն շաքարը, քինոան, լման հացը եւ այլն կրնան երկար ժամանակի վրայ վնասել մեր ուղեղին եւ պատճառել շատ մը հիւանդութիւններ ինչպէս ալզհայմըր, տիմենթիա, adhd, գլխու ցաւեր: Այս ուտելիքներու օգտագործումը նուազեցնելով եւ լաւ քոլեսթերոլ պարունակող ուտելիքներ օգտագործելով մենք պիտի օգնենք մեր ուղեղի լաւ աշխատանքին: Ըստ մասնագէտներու շաքարի շատ օգտագործումը եւ վատ քոլեսթերոլ պարունակող ուտելիքներու օգտագործումն է ուղեղի եւ սրտանօթային անհանգստութիւններու իսկական պատճառը:*

## ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԸ ԲՆՈՒԹԵԱՆ ԻՐԱԿԱՆ ՀՐԱՇՔՆ Է

*Եգիպտացորենը միակ լայն սպառում ունեցող ուտելիքն է, որուն բոլոր մասերը ոսկի կը պարունակեն, 100 կրամ հատիկները կը պարունակեն 0.5 միքրոկրամ Au, մինչ մարդու մարմնի պահանջարկը կը տարուբերի 2-4 մկ սահմաններուն մէջ:*

*Ոսկիի ազդեցութիւնը մարմնին վրայ՝*

** Չափահաս մարդու մարմնին մէջ կայ մօտ 10 մկ Au, որուն մօտաւորապէս կէսը կը գտնուի ոսկորներուն մէջ, մնացեալը լեարդին ու երիկամունքներուն մէջ:*

*Ոսկիի կենսաբանական դերը մարդու մարմնին մէջ կարօտ է յետագայ ուսումնասիրութեան, սակայն յայտնի են որոշ օգտակար յատկութիւններ:*

** Անիկա կը խթանէ մարմնի մէջ պղինձի իւրացումը:*

** Կը նպաստէ խոնաւցնող յատուկ նիւթերու աշխուժացման:*

** Յատուկ հաշուարկուած չափերը կը կիրարկուին աթերոսքլերոզի, օսթէոխոնտրոզի, փարոտոնդոզի, լեարդի հիւանդութիւններու, ընկճախտի պարագային:*

** Ոսկին կը զօրացնէ արծաթի հակաբորբոքային յատկութիւնները, ունի հակավարակային ազդեցութիւն:*

** Կը բարձրացնէ դիմադրողականութիւնը:*

*Ոսկիի եւ եօտի համադրութիւնը.*

** Եօտացուած ոսկին յայտնի է իբրեւ հակակարծրախտային (սքլերոզ) դեղօրայք, որ չունի հակառակ ազդեցութիւններ եւ յաճախ կը կիրարկուի ծերացող մարմնին բնորոշ հիւանդութիւններու բուժման համար: Ասիկա հնագոյն ժամանակներէն յայտնի միջոց է:*

** Ոսկիի տարբեր՝ աղային միացումներու հիմքին վրայ կը պատրաստուի դեղօրայք որոշ հիւանդութիւններու, ինչպէս փսորիազի հետեւանքով յառաջացած արթրիտի բուժման համար: Նման դեղերը կրնան յառաջացնել թունաւորում՝ չարաշահելու պարագային:*

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ ՈՒՏԵԼԻՔԻ ԶԳԱՅՆՈՏՈՒԹԻՒՆԸ-Allergy

*Կարգ մը փոքրիկներ ուտելէ ետք կը զգան սիրտխառնուք, քերուըտուք կամ որեւէ այլ անկանոնութիւն: Ծնողքը զինք կ՚ուղղեն զգայնոտութեան-allergy մասնագէտի: Կարգ մը քննութիւններ կատարելէ ետք մասնագէտ բժիշկը կը կազմէ ուտելիքներու ցանկ մը, որ կը պարունակէ փոքրիկին համար արգիլուած ուտելիքներ, որոնք կը համարուին զգայնոտութեան պատճառը: Հարցը կը բարդանայ, երբ կարգ մը փոքրիկներ նոյնիսկ բժիշկին ցուցմունքներուն հետեւելէ ետք դարձեալ ցոյց կու տան զգայնոտութեան նշաններ: Կը կատարուի երկրորդ քննութիւն եւ յայտնի կը դառնայ թէ զգայնոտութեան պարագան կարծուածէն աւելի բարդ է: Արգիլուած ուտելիքներու ցանկը կը մեծնայ:*

*Հարցը հոս այն է, որ կարգ մը քննութիւններ ճիշդ արդիւնքները չեն տար: Սխալ քննութիւն կատարելու պարագային մենք կը ստանանք սխալ ախտորոշում: Հազարաւոր մարդիկ իրենք զիրենք հեռու կը պահեն կարգ մը ուտելիքներէ սխալ ախտորոշում կատարելէ ետք:*

*Մասնագէտներ կը յայտնեն թէ շատ մը պարագաներու մանկաբոյժը անծանօթ է այս սխալներուն: Այս քննութիւնները 20 տարիէ ի վեր կ՚օգտագործուին: Սխալ ախտաճանաչման պատճառով շատ մը երեխաներ կ՚ունենան ճնշուած-stressed կեանք մը: Երեխաներ եւ անոնց ծնողները կ՚ըլլան անհանգիստ-anxious, սխալ ուտելիք չուտելու եւ կ՚ըլլան միշտ զգոյշ արգիլուած ուտելիք չուտելու համար: Ախտորոշումը պէտք է կատարուի ճիշդ ձեւով մարդոց կեանքին մէջ յաւելեալ բարդութիւններ չստեղծելու համար:*



## ԿԱՐԷՆ ԱՂԱՄԱԼԵԱՆ. ԱԿՆԿԱԼՈՒՄ ԵՄ ՄԷԿ ԿԱՄ ԵՐԿՈՒ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՈՒՂԵԳԻՐ ԲՌՆՑՔԱՄԱՐՏՈՒՄ



*Յուսով եմ, որ Հայաստանը կ'ունենայ Ռիո-2016-ի Օլիմպիական խաղերի բռնցքամարտի մրցաշարի ուղեգիր: Ակնկալում եմ մէկ կամ երկու օլիմպիական ուղեգիր: Աշխարհի առաջնութեան արդիւնքները չեմ կարող մեկնաբանել, քանի որ այժմ զբաղուած եմ Եւրոպայի երիտասարդների առաջնութիւնում Հայաստանի թիմին նախապատրաստելով: Այս մասին NEWS.am Sport-ի թղթակցի հետ զրոյցում ասաց բռնցքամարտի տղամարդկանց Հայաստանի երիտասարդական հաւաքականի աւագ մարզիչ Կարէն Աղամալեանը:*

*Թիմը Նոյեմբերի 19-29-ը մասնակցելու է Լեհաստանի Կոլոբժեկ քաղաքում կայանալիք Եւրոպայի երիտասարդական առաջնութեանը: Մրցաշարին ընդառաջ Հայաստանի երիտասարդական հաւաքականը Կարէն Աղամալեանի գլխաւորութեամբ Հոկտեմբերի 21-ից Նոյեմբերի 2-ը ուսումնամարզական հաւաք անցկացրեց Ծաղկաձորում: Նոյեմբերի 9-ին երիտասարդական հաւաքականը կը մեկնի Լիտուայի մայրաքաղաք Վիլնիուս, որտեղ կ'անցկացնի եւս մէկ ուսումնամարզական հաւաք: Վիլնիուսեան հաւաքը կը տեւի 10 օր:*

*«Մեծ օգուտ տուեց ծաղկաձորեան հաւաքը, քանի որ համատեղ էր Ռուսաստանի հաւաքականի հետ: Եւրոպայի առաջնութեանն ընդառաջ առաջին հաւաքի ժամանակ աշխատեցինք ընդհանուր ֆիզիքական պատրաստուածութեան վրայ: Այս օրերին թեթեւ ծրագրով մարզումներ ենք անցկացնում Երեւանում եւ Նոյեմբերի 9-ին մեկնում ենք Վիլնիուս, որտեղ կ'անցկացնենք եւս մէկ հաւաք: Վիլնիուսում մեզ հետ հաւաք կ'անցկացնեն նաեւ Լիտուայի, Լատուիայի, Իսրայէլի, Յունաստանի հաւաքականները:*

*Չնայած Ռուսաստանի թիմին համարում են ուժեղ թիմ, բայց ես լուրջ տարբերութիւն եւ որեւէ նոր բան չտեսայ ռուս բռնցքամարտիկների մօտ: Երեք անգամ արել ենք ազատ մենամարտեր: Եւրոպայի առաջնութեան մեկնող Հայաստանի ներկայացուցիչներից որեւէ մէկը ոչնչով չի զիջել եւ այժմ էլ չի զիջում Ռուսաստանի ներկայացուցիչներին: Նոյնիսկ իրենց մարզիկները ծաղկաձորեան հաւաքի ժամանակ նշեցին, որ մեր տղաները տեխնիկապէս իրենցից մէկ գլուխ բարձր են: Ռուսաստանի հաւաքականը միշտ շեշտը դնում է աւելի շատ ֆիզիքական պատրաստուածութեան վրայ, եւ ռուս մարզիկները ֆիզիքապէս աւելի ամուր են, բայց մեր տղաները ոչնչով չեն զիջում նրանց: Այս տարի մենք մասնակցել ենք երեք խոշոր միջազգային մրցաշարերի եւ մերոնք պարտութեան են մատնել ռուսներին, ղազախներին, ուկրաինացիներին: Մենք գնում ենք Եւրոպայի առաջնութեան եւ վստահ ենք, որ թոյլ չենք»,- ասաց Կարէն Աղամալեանը:*

*Եւրոպայի առաջնութիւնում Հայաստանը կը ներկայացնեն եօթ բռնցքամարտիկներ՝ Ալէն Դանիէլեանը (49 կգ), Վահէ Բադալեանը (52 կգ), Հրայր Շահւերդեանը (56կգ), Սպարտակ Թամարեանը (60 կգ), Գառնիկ Պապիկեանը (64 կգ), Սօս Քոչարեանը (81 կգ), Դաւիթ Ջալոյեանը (91կգ):*

## ԴԱՒԻԹ ԱՒԱՆԷՍԵԱՆԸ ՅԱՂԹԵԼ Է ՆՈԿԱՈՒՏՈՎ ԵՒ ԴԱՐՁԵԼ WBA-Ի ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԱԽՈՅԵԱՆ



*Ռուսաստանի դրօշի ներքոյ հանդէս եկող հայ բռնցքամարտիկ Դաւիթ Աւանէսեանը 21-րդ յաղթանակն է տարել պրոֆեսիոնալ ռինգում, որում կրել է մէկ պարտութիւն եւ մէկ մենամարտ աւարտել ոչ ոքի:*

*Կիսամիջին քաշային կարգում (66.68կգ) 27-ամեայ ռուսաստանցին նուաճել է Բռնցքամարտի համաշխարհային ասոցիացիայի (WBA) աչւոր գօտին: Մոնտէ Կարլոյում կայացած 12 ռաունդանոց մենամարտում Աւանէսեանը նոկաուտով յաղթել է վենեզուելացի Ջարլի Նաւարոյին, որը ռինգի յատակին յայտնուել է 9-րդ ռաունդում:*

*Դա Աւանէսեանի 11-րդ յաղթանակն էր նոկաուտով: Մինչեւ այդ մենամարտը նա WBA-ի վարկանիշային աղիւսակում 10-րդն էր, իսկ Ջարլի Նաւարոն՝ 9-րդը:*

*Դաւիթ Աւանէսեանը դարձել է WBA-ի աշխարհի ախոյեանի կանոնաւոր գօտու յաւակնորդ: Այդ տիտղոսը պատկանում է ամերիկացի 26-ամեայ Կիտ Տուրմանին:*

## «ՍՊԱՐՏԱԿԸ» ԿԸ ՎԱՃԱՌԻ ՅՈՒՐԱ ՄՈՎՍԻՍԵԱՆԻՆ



*Յուրա Մովսիսեանը, Դմիտրի եւ Կիրիլ Կոմբարովները, Դենիս Գլուշակովն արդէն ձմեռային տրանսֆերային պատուհանի ժամանակ կը հեռանան Մոսկուայի «Սպարտակ»ից, հաղորդում է euro-football.ru-ն: Բոլորն էլ երկարաժամկէտ պայմանագրեր ունեն ռուսական ակումբի հետ:*

*«Սպարտակ»ի գլխաւոր տնօրէն Սերգէյ Ռոդիոնովը յայտարարել էր, որ մարզիչները չեն կարող արդիւնքի հասնել, եթէ ֆուտբոլիստները տարիներ շարունակ չեն կարողանում լուծել համեստ խնդիրներ, եւ ակումբը պատրաստ է «վիրաբուժական միջամտութեան»:*

*Սպասւում է, որ «Սպարտակը» կարող է վաճառել ընթացիկ կազմի մինչեւ 10 ֆուտպոլիստների:*

## ՈՒԵՖԱ. ՀԵՆՐԻԽ ՄԽԻԹԱՐԵԱՆԸ՝ ՇԱԲԱԹՈՒԱՅ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ՀԱՒԱՔԱԿԱՆՈՒՄ




*ՈՒԵՖԱ-ն Հայաստանի հաւաքականի եւ Դորտմունդի «Բորուսիայի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանին ընդգրկել է Եւրոպայի լիգայի խմբային մրցաշարի չորրորդ տուրի խորհրդանշական հաւաքականում:*

*Յիշեցնենք, որ գերմանական ակումբը 4:0 հաշուով առաւելութեան է հասել ադրպէյճանական «Գաբալայի» նկատմամբ, իսկ Հենրիխ Մխիթարեանը դարձել է կոլի եւ երկու գոլային փոխանցման հեղինակ:*

## ՖԻՖԱ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՍԿԱՅԱԿԱՆ ԱՆԿՈՒՄՆ ՈՒ ԲԵԼԳԻԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ



*Ֆուտպոլի Հայաստանի ազգային հաւաքականը **ՖԻՖԱ**-ի դասակարգման աղիւսակում նահանջել է 36 աստիճան եւ յայտնուել 127-րդ տեղում: Նախորդ հրապարակումից յետոյ Հայաստանի թիմն ընկերական խաղում 0:4 հաշուով պարտուել էր ֆրանսիացիներին եւ Եւրօ-2016-ի ընտրական մրցաշարի վերջին տուրում 3 անպատասխան գոլ էր բաց թողել Ալբանիայի հաւաքականից: Վերջին 5 տարիներին սա Հայաստանի հաւաքականի վատագոյն ցուցանիշն է:*

*Պատմութեան մէջ առաջին անգամ Բելգիայի հաւաքականը գլխաւորել է **ՖԻՖԱ**-ի վարկանիշային աղիւսակը: Աշխարհի ախոյեան Գերմանիան պահպանել է երկրորդ տեղը, իսկ արգենտինացիները նահանջել է երրորդ տեղ: Լաւագոյն տասնեակում են նաեւ՝ Պորտուգալիան, Չիլին, Սպանիան, Կոլումբիան, Բրազիլիան, Անգլիան ու Աւստրիան:*

*Աշխարհի 2018թ. առաջնութեան ընտրական փուլում Հայաստանի հաւաքականի մրցակիցներից Ռումինիան 14-րդն է, Դանիան՝ 35-րդը, Լեհաստանը՝ 38-րդը, Չեռնոգորիան՝ 78-րդը, իսկ Ղազախստան՝ 131-ը:*

*Յիշեցնենք, որ Հայաստանի հաւաքականը յաղթանակ չի տարել նախորդ 13-րդ խաղերում՝ թարմացնելով սեփական հակառակորդը:*

**www.massispost.com**
**daily news updates**

## ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** Մարտ 21-Ապրիլ 19
Անհամբերութեանդ պատճառաւ, յաճախ տուժելու հակամէտ ես եւ մտիկ չեսըներ քեզի տրուած խրատները: Մօտ ապագային, եղանակային պտոյտներ պիտի ծրագրես: Կողակիցիդ հետ ունեցած մտերիմ յարաբերութիւնդ լաւագոյն երջանկութիւնդ է:
Բախտաւոր թիւերդ են: 1,9,18,22,25

**ՑՈՒ** Ապրիլ 20-Մայիս 20
Հաճոյք փնտռելը շատ կը սիրես եւ այս շաբաթ ամէն բան առատօրէն պիտի վայելես: Շուտով եզրակացութիւններու կը յանգիս, որոնք երբեմն սխալ կրնան ըլլալ:
Շատ գաղտնապահ ես եւ չես սիրեր հարցերդ բաժնեկցիլ ուեւէ մէկու հետ:
Բախտաւոր թիւերդ են: 10,15,21,30,33

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** Մայիս 21-Յունիս 20
Ուրիշները հաճեցնելը քեզի անձնական գոհունակութիւն կը պատճառէ: Խրատ տալու մէջ շատ զգոյշ ես, եւ սակայն կը սիրես ուրիշներու խօսքերուն հետեւիլ: Նիւթական շահ մը պիտի ուրախացնէ քեզ:
Բախտաւոր թիւերդ են: 5,12,16,29,30

**ԽԵՑԳԵՏԻՆ** Յունիս 21-Յուլիս 22
Անարդարութեան եւ կաշառքի երբեք չես հանդուրժեր: Քեզի տրուած խոստումներուն անմիջապէս կը հաւատաս եւ շուտով կը նեղուիս երբ անոնք չ՛իրականանան: Ինքզինքդ ճաշ ուտելէ բնաւ մի զրկեր լաւ երեւնալու համար:
Բախտաւոր թիւերդ են: 11,18,24,31,35

**ԱՌԻԾ** Յուլիս23-Օգոստոս 22
Հրահանգի հետեւիլ երբեք չես սիրեր՝ սակայն այս շաբաթ պիտի ստիպուիս տեղի տալ կատարելով կողակիցիդ կամքը: Տրամաբանութիւնդ գործածելով մեծ պատահարէ մը պիտի կրնաս խուսափիլ: Տարէցներու նկատմամբ հոգատար եղիր:
Բախտաւոր թիւերդ են: 7,14,23,34,35

**ԿՈՅՍ** Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
Շատ հանդարտ բնաւորութեան տէր անձ մըն ես եւ երբեք ճանաչում չես փնտռեր: Այս շաբաթ պանդխտութեան մէջ բնակող սիրելիի մը պիտի միանաս եւ մեծ թիւով մարդիկ պիտի հիւրընկալես տանդ մէջ: Ուրախ ըլլալու շատ պատճառներ ունիս:
Բախտաւոր թիւերդ են: 4,15,20,26,31

**ԿՇԻՌՔ** Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22
Շատ ազդեցիկ անձ մը ըլլալուդ՝ յաճախ կը յարգուիս եւ մարդիկ կը խօսին քու ազնուութեանդ մասին: Կալուածի մը պիտի տիրանաս եւ գոհացնես կարիքներդ: Հիւանդի մը այցելութիւն կատարելով՝ հոգեկան գոհունակութիւն պիտի ստանաս:
Բախտաւոր թիւերդ են: 3,13,17,20,30

**ԿԱՐԻՃ** Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
Տնտեսական տագնապի դժուարին պայմաններու տակ, շատ լաւ եւ լաւատես կեցուածք կը ցուցաբերես հարցերուն: Հայեացքդ սեւեռած ես հեռուն եւ կը նախաձեռնես յաջող միջոցառումներ: Շարունակէ օգնել կարօտեալներուն:
Բախտաւոր թիւերդ են: 5,11,27,32,35

**ԱՂԵՂՆԱՒՈՐ** Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21
Բոլոր կեանքդ վարագոյրի ետեւ աշխատող եղած ես, ժամանակն է որ ինքնավստահ ըլլաս ես ձիրքերդ ու կարողութիւններդ յայտնես: Գործիդ մէջ մեծ փոփոխութիւններ պիտի ուրախացնեն քեզ եւ նպաստեն նիւթական իրավիճակիդ:
Բախտաւոր թիւերդ են: 3,16,18,22,33

**ԱՅԾԵՂՋԻՒՐ** Դեկտեմբեր 22-Յունուար 19
Պտոյտը եւ բնութիւնը շատ կը սիրես եւ յաճախ կը ճամբորդես: Բարեկամներդ կ՛ուզեն օրինակիդ հետեւիլ, փորձառութիւններդ բաժնեկցիր անոնց հետ: Մեծ հաւաքոյթի մը ներկայ պիտի ըլլաս:
Բախտաւոր թիւերդ են: 12,20,25,30,33

**ԾՈՎԱՆՈՅՇ** Յունուար 20-Փետրուար 18
Ապագադ շատ փայլուն եւ յաջող է եւ ընտանիքիդ անմիջական անդամները քեզ շատ կը սիրեն ու կը հետեւին օրինակիդ: Ուրիշներու կարիքները հոգալով՝ սրտի գոհունակութիւն կ՛ունենաս: Անձնական գործերդ մի յետաձգեր:
Բախտաւոր թիւերդ են: 5,22,28,33,35

**ՁՈՒԿ** Փետրուար 19-Մարտ 20
Զբաղ ըլլալդ պատրուակ ըրած ես այցելութիւններուդ մէջ զլանալով: Չափազանց մտահոգուած ես քննութեան մը արդիւնքով: Ինքզինքդ նիւթապէս ապահովէ եւ գիտակից եղիր ծախսերուդ: Գովաբանութեան մը պիտի արժանանաս:
Բախտաւոր թիւերդ են: 7,19,28,34,35

## Հայաստանին Ծանր Որոշումներ են Սպասում

Շարունակուած էջ 2–էն

այդ կազմաւորումների հետ):

Հայաստանի գալիք իշխանութիւնը պէտք է ծանր որոշում կայացնի, եւ Սահմանադրութիւնը փոխելու Սերժ Սարգսեանի մտադրութիւնը դրա հետ է կապուած: Մոսկուան Հայաստանում կ՚աջակցի սահմանադրական փոփոխութիւններին, եթէ երաշխիքներ ստանայ, որ հանրաքուէին հայերը կողմ քուէարկեն Ռուսաստանի հետ սերտ ինտեգրացիային: Պատահական չէ, որ Մատւիենկոյի այցի օրերին սոցհարցման արդիւնքներ հրապարակուեցին, որով Հայաստանի բնակչութեան 54.4 տոկոսը կողմ է, որ Հայաստանը մտնի Ռուսաստանի կազմ:

Այդ համատեքստում, Արեւմուտքը, ըստ Ժուլթեան, չպէտք է որ աջակցի սահմանադրական փոփոխութիւններին: Սակայն հանրաքուէն կարող է պէտք գալ այլ ոչ պակաս կարեւոր որոշումների համար:

Հայաստանին ծանր որոշումներ են սպասում, եւ դրանք պէտք է կայացնի հանրութիւնը հանրաքուէի միջոցով:

## ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Շարունակուած էջ 6–էն

Թանգարանին մասին առաջարկներ փոխանցելու համար վարչութեան: Հոն պիտի զետեղուի նաեւ այժմ մշակուող Թանգարանին ընդհանուր նախագիծը, երբ անիկա վաւերացուի Կլենտէյլի քաղաքապետական խորհուրդին կողմէ: Թանգարանի համացանցային կայքին հասցէն է՝ www.armenianamericanmuseum.org:

Ամերիկահայութեան Թանգարանը նաեւ կը ծրագրէ Նոյեմբեր եւ Դեկտեմբեր ամիսներուն հանրային հաւաքներ կազմակերպել, ծրագիրը հանրութեան ու կազմակերպութեանց ծանօթացնելու եւ անոր իրականացման համար ներդրումներ ապահովելու նպատակով:

Վարչութեան համաատենապետները յառաջիկայ երկու ամիսներուն կրնան համաձայնութիւն մը կնքել քաղաքապետարանին հետ՝ քաղաքի Սիվիք Օտիթորիըմէին կից եւ Հանրային քոլեճին դիմաց գտնուող 1.7 արտավար (էյքըր) տարածքը նշեալ ծրագիրին համար երկարատեւ վարձքով օգտագործելու վերաբերեալ:

## ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ ՓՕԼ ՀԱՅՏՈՍԹԵԱՆ

Շարունակուած էջ 7–էն

կազեան համալսարանի դերը հինմաւորելով շեշտեց.«Հայկազեանի առաքելութիւնը չափազանց կարեւոր է, որովհետեւ Սփիւռքի մէջ հայկական բոլոր հաստատութիւններուն պարտականութեան մէկ մասը ըլլալու է ներկայացնել հայը, հայութիւնը, հայկականը, լաւագոյն եւ դրական իր միջոցով, եւ Հայկազեանը այդ ջանքին մէջ փորձ ունեցած է վաթսուն տարիներու փորձ, երբ կամրջած է հայը այլ լիբանանցիներու եւ արաբ ժողովուրդներու հետ: Կամրջած է նաեւ բոլոր հայերը իրարու հետ: Երբեմն զարմանքով մարդիկ ինծի դիմած են, տեսած են, որ Հայկազեանի մէջ ոչ մի հայ յարանուանական խտրութիւն չկայ եւ կամ ընդհակառակը՝ իսկապէս միասնականութիւն կայ, այլ կայ նաեւ քաղաքական, ընկերային, տնտեսական, տարբեր խաւերու, մակարդակներու, ժողովուրդներու մարդոց մէկտեղումը: Եթէ հարց տրուի ինծի, ի՞նչն է, որ այդ վաթսուն տարիներէ գոհացուցած է զիս, հետեւեալն է. ընկերային, տնտեսական բոլոր խաւերէն մարդիկ, Հայկազեան գալով բարձրացուցած են իրենց ընտանիքները, իրենց գաղութները»: Իսկ Հայկազեանի դերն ու մակարդակը մատնանշելով՝ Վերապատուելին յայտնեց. «Բնականաբար Հայկազեանը կամրջած է իր իրականութիւնը, հայկականը, լիբանանեանը մանաւանդ ամերիկեան համալսարաններու համակարգին հետ, Ամերիկայէն դուրս, Ամերիկեան համալսարանի համակարգին մէկ մասը կը կազմէ»:

Աւարտին խօսելով Հայաստանի հետ կապերու կարեւոր իրադրութեան մասին՝ Հայտոսթեան նշեց. «Այսօր գոհունակութեամբ պիտի յիշենք, որ Հայաստանի հետ այդ կամուրջները նետելու կամ ամրացնելու ընթացքին մէջ ես կը մտածէի, որ Հայկազեանը Հայաստանի հետ կամուրջ կը նետէ թէ ոչ, յանկարծ զգացի, որ Հայկազեանն ու Հայաստանը թէ՛ հոսող ջուր են թէ՛ կամուրջ, որովհետեւ մեր հոսող ջուրը առանց Հայաստանի եւ Հայաստանի ժողովուրդին, հանրապետութեան եւ անոր հաստատութիւններուն շատ ցանցառ պիտի ըլլայ, տկար պիտի ըլլայ»:

### ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Ուրախութեամբ կ՚իմանանք թէ Տէր եւ Տիկ. Ռաֆֆի Կիրակոսեան բախտաւորուած են առջինեկ մանչ զաւակով մը եւ անուանած Օլիվըր:

Մեր ջերմ շնորհաւորութիւնները եւ քաջառողջ ու երջանիկ կեանքի բարեմաղթութիւնները նորածինին, ծնողներուն, մասնաւորաբար մեծ հօր եւ մեծ մօր Տէր եւ Տիկ. ընկ. Ժիրայր Կիրակոսեանին:

«Մասիս»

### ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Տէր եւ Տիկ Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեան Թոռնիկ ունենալու ուրախ առիթով կը նուիրեն 100 տոլար «Մասիս» Թերթին եւ 100 տոլար Հ.Մ.Մ.-ի Տիկնաց Միութեան:

### ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Մի ոմն գնահատելով «Մասիս» Թերթի բովանդակութիւնը 100 տոլար կը նուիրէ «Մասիս»-ի բարգաւաճման ֆոնտին:

## «ՄԱՇԵՑՈՒՄԻ» ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 13-էն*

*մասնաւորի ցեղասպանութենէ վերապրած չորրորդ երիտասարդ սերունդի գիտակցութեամբ եւ մասնակցութեամբ, ապա հարց պէտք է տալ, թէ «Արդեօք տեղ կը հասնի՞ մաշեցումի այս ռազմավարութիւնը»:*

*Եւ առկայ է այսօրուան իրավիճակը: Եւ այդ՝ Թրքական «մաշեցումի» քաղաքականութիւնը (իմա՛ Փերինչեքը)՝ ընդդէմ հայկական «արժանապատուութեան» պահանջատիրութեան (իմա՝ Զուիցերիա): Եւ այս «պայքար» է: Ոչ թէ զէնքի ու զէնքով՝ այլ իրաւունքի եւ իրաւունքով: Եւ հայուն համար՝ վերատիրանալու իր «արժանապատուութեան»: Եւ այս պայքարին ու հակամարտող կողմերուն եւ կեցուածքներուն մէջ կան եւ պիտի ըլլան առանցքներու զարգացումներու վերիվայրումներ: Թեր ու դէմ այս պայքարին մէջ կան ու պիտի ըլլան «նուաճումներ» ու «տեղքայլեր»:*

*Փերինչեք ընդդէմ Զուիցերիոյ գործով Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանին եւ անոր որոշումներուն հոլովոյթը պէտք է դիտել նաեւ այս պրիսմակէն: Եթէ կան այդ որոշումին մէջ յօդուածներ, որոնք «յաջողութիւն» էին հայուն, եւ տակաւին ոչ այդքան «նպաստաւոր» կարգ մը այլ տարբերակներ, բայց այս բոլորը պէտք է դիտել այս «պայքարին» համընդհանուր իրականութեան մէջէն: Եւ պէտք է պատրաստ ու զգաստ ըլլալ այդ բոլոր տարբերութիւններուն դիմաց: Ախորժելի թէ ոչ:*

*Թուրքը իր պետականութեամբ պիտի շարունակէ իր «մաշեցումի» ռազմավարութիւնը՝ մաշեցնելով հայուն «յուշե՞րը»: Ու անոր հետ հայուն «իրաւունքնե՞րը»: Ապրած ու իրաւունքով կերտած «յուշե՞րը»: Եւ հայը միւս կողմէ պիտի շարունակէ իր «արժանապատուութեան» պահանջատիրութիւնը:*

*Փերինչեք ընդդէմ Զուիցերիա գործը մէկ օղակն է Թրքական «մաշեցումի» ռազմավարութեան՝ ընդդէմ հայկական «արժանապատուութեան» պահանջատիրութեան:*

*Բայց հայուն համար կայ մէկ յստակ իրականութիւն:*

*Հայը վճռած է շարունակել իր պահանջատիրութիւնը: Կեանքին, միտքին եւ հողին:*

*Եթէ այսօր կը «յիշենք» նահատակները, որովհետեւ անոնք համոզուեցան, թէ հայուն արժանապատիւ կեանքով է, որ հայը պիտի շարունակէ ապրիլ: Իսկ վերապրողները այդ «ցաւը» իրենց մէջ սեղմեցին՝ իբրեւ ապրող արժանապատուութիւն գալիք սերունդին: Եւ մենք՝ «գալիք» սերունդը եւ տակաւին «եկողները», այս արժանապատիւ կեանքը վերածած ենք պահանջատիրութեան:*

*Այս «արժանապատիւ» կեանքն է, որ պիտի ու պէտք է շարունակէ տոկալ «մաշեցումի» բոլոր ռազմավարութիւններուն դէմ:*

## ՔԱՐՈՒԱՃԱՌ ՇՐՋԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԸ

*Շարունակուած էջ 14-էն*

*չեն կազմակերպուել:*

*«Մարզադպրոցի սաները մասնակցել են որոշ հանրապետական միջոցառումների, սակայն տեղում կազմակերպիչը մարզադպրոցը չէ», պարզաբանեց մեր զրուցակիցը: Նա նաեւ տեղեկացրեց, որ առաջիկայում սպասւում են շրջանային մրցոյթներ թեթեւ ատլետիկայից, կը կազմակերպուի աղջիկների վոլիպոլի շրջանային մրցոյթ:*

*Մարզադպրոցի տնօրէն Արմէն Ասրեանը, անդրադառնալով մարզադպրոցի հիմնական խնդիրներին, նշեց մարզագոյքի պակասը:*

*«Մարզագոյքի պակասն է պարապունքները լիարժէք անցկացնելու հիմնական խոչընդոտը: Իհարկէ, որոշակի մարզագոյք տրամադրւում է, գնդակներ, թենիսի ձեռնաթիեր ստանում ենք, բայց դրանք արագամաշ են ու արագ են շարքից դուրս գալիս: Ըմբշամարտի համար անհրաժեշտ է գորգ, որը շատ թանկ է, դժուար է ձեռք բերել: Ըմբշամարտի լիարժէք պարապունքների համար անհրաժեշտ են նաեւ խրտուիլակներ: Մկանները զարգացնելու համար պէտք են նաեւ հանտելներ», ընդգծեց մարզադպրոցի տնօրէնը:*

*Նշենք, որ մարզադպրոցի երեխաները յատկապէս յաջողութեան են հասնում անհատական մարզաձեւերում գ մասնաւորապէս, տարբեր տարիներին մարզադպրոցի սաները հանրապետական մրցոյթներում 1-2-րդ տեղեր են զբաղեցրել ձիւդոյի մրցումներում, յաջողութեան են հասել ազատ ոճի ըմբշամարտում: Երեխաները հաճոյքով են պարապում նաեւ սեղանի թենիս, թեթեւ ատլետիկա:*

*Պարապունքներ անցկացնող մարզիչները գերազանցապէս մասնագէտներ են:*

*Նշենք, որ Քարուաճառի տարածքը հնարաւորութիւն է տալիս նաեւ անհրաժեշտ պայմաններ ապահովելու դէպքում զարգացնել ձմեռային սպորտաձեւերը, մասնաւորապէս, դահուկասահքը:*

*Տեղեկացնենք, որ «Խաչէն» մարզադպրոցը գործում է 2004 թուականից:*

## ԱՇՆԱՆ ՀԵՔԻԱԹ

*Շարունակուած էջ 15-էն*

*տում է, որ Արգիշտին հայոց Արամ-Արամէ թագաւորի Արա-Արաեան գահատոհմի Արմինա երկրի Արմայիս արքան է եւ ոչ թէ Ուրարտու-Ուրաշտու-ի արքան: Ասորեստանի արքաների արձանագրութիւնները գրուած են իրենց լեզուի ու գրերի համակարգով, եւ այն վերծանուել են ըստ այնմ: Ասորեստանի արքաները իրենց արձանագրութիւններում հրաբուխներից կրակի երկիրներ՝ Արմինա, Նայիրի, Արմանի, Արատտա-ն՝ Ասորերէն լեզուի կրակ իմաստով Ուրարտու-Ուրաշտու են անուանել:*

## ԽԱՉՔԱՐԻ ԶԵՏԵՂՈՒՄ ՊՔԵՐՔԷԻ ՄԷՋ

*Շարունակուած էջ 14-էն*

*կան եւ հայրենասիրական»: Պշարա Ռային պատրիարքը յայտնեց, որ հայ ժողովուրդը Լիբանանի մէջ ճանչցուած է՝ իբրեւ նուիրեալ ու անկեղծ քաղաքացի, որ իր ճիգը չէ խնայած բարօր կեանքի ապահովման եւ միաժամանակ Լիբանանի բարգաւաճման բոլոր մարզերուն մէջ անխտիր: Ան ըսաւ.- որ հայերը իրենց աշխատանքով եւ խիզախութեամբ կրցան կազմել իրենց պետութիւնը: Ան շնորհակալութիւն յայտնեց բարերար Սարգիս Պուտագեանին եւ իր ընտանիքին՝ խաչքարի զետեղումը իրագործելուն համար:*

*Այս խաչքարի զետեղումը խորհրդանշական արարողութիւն մըն է: Միջին Արեւելքի մէջ տեղի ունեցող վերիվայրումներուն, քրիստոնեաներ անգամ մը եւս հաստատեցին իրենց միասնականութիւնը դիմագրաւելու համար շրջանը հարուածող փոթորիկը: Անոնք անգամ մըն ալ հաստատեցին Քրիստոսի հաստատած եկեղեցւոյ մէկութիւնը: Քրիստոնեան, երբ կը յայտնէ իր նեցուկը եւ զօրակցութիւնը իր եղբայր քրիստոնեային ու կը յարգէ զայն, յարգելով անոր պատմական ու մշակութային ժառանգը, աւելի կը բարձրանայ: Միջին Արեւելքի քրիստոնեան անգամ մը եւս կը փաստէ թէ տէրն է իր եղբայրը յարգելու եւ անոր ցաւակից ըլլալու քրիստոնէական հին եւ անկեղծ մշակոյթին: Անգամ մը եւս Միջին Արեւելքի քրիտոնեան կը յայտնէ իր գործով, թէ հեռու է ամէն նիւթապաշտութենէ եւ իր եղբօր ձեռք մեկնելով կը յարգէ անոր անցեալի ցաւերը եւ բաժնեկից կը դառնայ անոր կեանքի հոլովոյթին իր ուրախութեամբ եւ ցաւով:*

## ՄՏՔԵՐ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ

–Տխրութեան մէջ ալ գեղեցկութիւն կայ:
(Չառլի Չափլին)
–Հիացմունք ապրելու անընդունակութիւնը միջակութեան նշան է:
(Պալզաք)
–Սիրոյ պատճառով ինչ ալ պատահի, կը պատահի բարիէն ու չարէն այն կողմ:
(Ֆ. Նիցչէ)
–Ձեր հայեացքը յստակ կը դառնայ միայն այն ժամանակ, երբ սկսիք նայիլ ձեր սեփական հոգիին:
(Քարլ Եանկ)
–Միայն մէկ բան կայ ժամանակին յաղթող, անիկա իմաստութիւնն է:
(Մ. Պէշիկթաշլեան)
–Իւրաքանչիւրի կեանքին մէջ պէտք է քիչ մը անձրեւային եղանակ

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՅՈՎՀԱՆՆԷՍ ՃԷՐԷՃԵԱՆԻ (Շիրազ) մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Հայկուհի Փաթաբութեան (Վահագն) իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի տիկնոջ, հարազատներուն եւ համայն պարագաներուն:*

*Առ այդ 100 տոլար կը նուիրեն «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ**

---------------------------------

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**

*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 125,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ----------------------------------------
**Address:** ----------------------------------------
**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------
**Country:** -------------
**Tel :**---------------------- **Email:** -------------------------

ՎԱՐԶՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ՝ (626) 398-0506

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net


ARMENIA FUND'S 18TH INTERNATIONAL THANKSGIVING DAY
Telethon 2015
November 26
NEW BROADCAST TIME 10AM-10PM PST
NOW IN HIGH DEFINITION
ՄԵՐ ՏՈՒՆԸ
OUR HOME
ArmeniaFund
LIVE BROADCAST COAST-TO-COAST
10am-10pm PST
HD
SOUTHERN CALIFORNIA
KSCI CHANNEL 18
KVMD CHANNEL 31
CENTRAL CALIFORNIA
KGMC CHANNEL 43
SAN FRANCISCO BAY AREA
KTSF CHANNEL 26
VISIT & DONATE: www.ArmeniaFund.org or Call:1-800-888-8897
12 HOUR LIVE WEBCAST AT WWW.ARMENIAFUND.ORG
Facebook.com/ArmeniaFund
Twitter.com/ArmeniaFund
YouTube.com/ArmeniaFundUS
instagram.com/ArmeniaFund